Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2685
157
85
Ա-35
№ 418
ԳՐ. ԵՂԲ.

887
807
821

P-168

IV 370

2011

# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Վ. ԱԼՖԻԵՐԵԱՑ

# Ի ՄԵՐՈՊԷ

2003

Инв. № 2287/55
ЧИТАЛИЩЕ „КРАСИРАЦ" 370

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Վ. ԱԼՓԻԵՐԵԱՑ

# Ի ՄԵՐՈՊԷ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԵԳՈՒԱՐԴ Վ. ՀՈՒՐՄՈՒԶ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԻՐԱԿԱՅ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1873

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
36895-66 р

## ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Մերոպէ կին Կրեսփոնի 'ի տեսանել առաջի աչաց իւրոյ սպանեալ զայր իւր և զորդիս, տարեցուցանէ զմի 'ի սոցանէ զԵգիսթ, և առաքէ յԱրկադիա առ Կեպսել հայր իւր։ Ցայնմ վայրի Պոլիփոն եղբայր սպանելոյ արքային առեալ զթագաւորութիւն, խնդրէ զաջ Մերոպեայ 'ի կնութիւն. և խոստանայ վարձ մեծ սպանողին Եգիսթեայ։ Եգիսթ եղեալ 'ի տիս՝ գայ յանծանօթս 'ի Մեսէնս իբրև սպանող Եգիսթեայ, և պահանջէ զխոստացեալն վարձ։ Այնպէս հաւատարիմ լինին կեղծիքն, զի Մերոպէ ինքնին 'ի վերայ հասեալ պատանւոյն՝ ուր 'ի քուն կայր, մինչդեռ ահա պատրաստ 'ի սպանանել զորդի իւր, ճանաչէ ըզնա 'ի ձեռն ծերունւոյ ուրումն մտերմի իւրոյ՝ որ գայր ընդ նմա։ Միաբանին յայնժամ ամենեքեան ունել զՊոլիփոն 'ի պատրանս, մինչև 'ի մեծահանդէս ուրեք զոհի պարապ առեալ՝ մատնեն զնէքն 'ի մահ։

---

50877-Ա-Ւ.

# ԱՆՁԻՆՔ

ՊՈԼԻՓՈՆ *բռնաւոր Մեսենայ։*
ՄԵՐՈՊԷ *դշխոյ Մեսենայ։*
ԵԳԻՍԹ *որդի Մերոպեայ։*
ՊՈԼԻԴՈՐ *յանձանձիչ Եգիսթեայ։*
ԶԻՆՈՒՈՐՔ։
ԺՈՂՈՎՈՒՐԴ։

*Տեսարանն է յարքունիս անդ 'ի Մեսենէ։*

# ՄԵՐՈՊԷ

## ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

### ՏԵՍԻԼ Ա.

ՄԵՐՈՊԷ

Աւ ի՜նչ կեաս Մերոպէ, ոչ եւս իցես թերեւըս մայր,
Հի՞մ յարքունիս աստ արտասուօք անցուցեր ամս հընգետասան
Վըշտակիր ընդ ձեռամբ ապիրատին Պոլիփոնի,
Ուր երբեմըն տիրէիր հրէշին այնմիկ՝ որ փողոտեաց
Առաջի քո, ո՜վ տեսիլ, զայր եւ զորդիս քո զերկոսին։
Զարըաստիկ հարսանեաց մին այն մընայր ինձ գրաւական,
Զոր պահէի ժառանգ գահուն եւ վըէժխընդիր, միակ ինձ յոյս,
Միակ կենաց իմոց պատճառ... զի՞նչ արդ օգնէ ինձ որդեակ իմ,
Զի զերծուցի մազապուր ըզքեզ յանգութ կոտորածէն.
Անըզգոյշ պատանեակ, ահա էանց ամ մի 'ի լի
Յորմէհետէ թող մեկնեցաւ նա 'ի ծածուկ ապաստանէն,
Յորում կայր յապահովի ընդ հովանեաւ Պոլիդորի.
Լուսնեակք են վեց՝ զի ծերունին հէք, որ գոգցես հայր է նորին,
Ել յՆելեաէ շուրջ 'ի խընդիր նորին ընդ բնաւ իսկ Ելլադա,
Եւ չէք ինչ ցարդ ըզնըմանէ լուր ինչ, եւ ոչ ըզմանկանէն։
Անդէճ տոսկալի. եւ 'ի լըրումն իմոց վըշտաց
Պարտ է ինձ թագուցանել յիս ըզդըժնեայ աղէտըս զայս։
Զիք ընդ Մեսէնս համօրէն եւ ոչ մի ոք ինձ ողըակից.
Դարձ 'ի շիրիմ հարկ է առնել ինձ յար իմոյս Կրեսփոնի,
Հեղուլ արտասուս... ներեա փեսայդ իմ ինձ, թէ ոչ
Ըզհետ քո գամ. վասն որդեկիս եւեթ մերոյ է զի դեռ կեամ,
Թէ կեայ իսկ նա... այլ՝ ո՞ գայ այսըր, Պոլիփոն! խոյս տաց աստի։

## ՏԵՍԻԼ Բ.

### ՊՈԼԻՓՈՆ, ՄԵՐՈՊԷ

ՊՈԼԻՓՈՆ

Կաց մնա, ընդէր խուսես. ծանուցս քեզ ունիմ ասել։

ՄԵՐՈՊԷ

Ո՛չ ինչ լսել կամիմ 'ի քէն :

ՊՈԼԻՓՈՆ

Ուրեմըն չիք եւ ոչ մի ինչ
Որ ամոքել բաւէ, տիկին, ըզբարկութեան քո զդառնութիւն,
Ոչ աղերս, ոչ ժամանակ, ոչ աղաչանք իմ եւ ոչ գործք :
Քո դըժընդակ վիշտ որ թըւէր իմըն միտել 'ի սպառուած,
Վասն էր յամէ հետէ եւեւըս զայրանայ, աղէ ասա,
Եւ թըշնամի անձամբ անձին այդպէս ըզքեզ կացուցանէ :
Գարշիս յինէն, ճակատագիր իմ ապաքէն քան թէ յանցուած
Զայդ հարկ առնէ. երդուեալ յարեւ քոյին զի զթագ եւեթ բառնալ
Յառնէ քումմէ կամէի, եւ ոչ ըզկեանըս, մի լիցի.
Այլ Եբըր մարթ իցէ սանձել յաղթականին ըզթափ զօրուն.
Արբեալ արեամբ մինչեւ 'ի ներքս այսր յարքունիս ըզհետ մըտին,
Ոչ կարացի 'ի ձեռաց նոցա 'ի բաց առնուլ ըզնա :
Եղէ այո, ոչ ժըխտեմ, ոսոխ նըմին, այլ իրաւամբք.
Յարենէ Հերակլեանց թագաւորազն եւ ես ծընեալ,
Ըզգաւազան արքունի թողուլ 'ի նա ոչ կարէի
Այնու եւեթ զի զայն նըմա սափոր 'ի դէպ վիճակեցայց :
Այլ մօր եւ ամուսնոյ սըրտի կըսկիծ իրաւացի
Ոչ աղերսից լսէ եւ ոչ անժըխտելեաց իսկ իրաւանց :
Գիտել միայն իղձ է ինձ, ուստի՞ զայրոյթ քո վաղեմի
Արծարծանի արդ վերըստին. ո՞չ զամենայն գործեմ միշտ գուն
Քաղցր ըզնըսեհ քո յարդարել. զառանցանաց պատերազմի
Մա՞րթ էր առնել ինչ փոխարէն՝ զոր իմ չիցէ արարեալ քեզ։

ՄԵՐՈՊԷ

Կամիս ապա զի գոհութիւն եւըս վասն այն քեզ մատուցից
Զի զգահոյս միայն եւ զայր բարձեր յինէն եւ զորդիս.



ՊՈԼԻՓՈՆ

Եւ զորդիս! այլ պահի քեզ մի 'ի նոցունց դեռ կենդանի :

ՄԵՐՈՊԷ

Անիրաւիս. այդպէս յանկարծ գոյր ճըշմարիտ, այլ եղո՛ւկ ինձ,
Զի կորուսի զամենեսին. տեսի զանպարտն իսկ զայն հարեալ,
Անգութ անկարեկիր. թերեւըս քաղցր է քեզ լսել
Ըզդառնաղէտ արկածն յինէն. յայնմ ահագին գիշերի
Ի խուժել արըանեկաց քոց յարքունիս այսըր զինուք,
Ուր ամենայն ուրեք արիւն էր բոց եւ ճիչ եւ սպառնալիք,
Ո՞չ եւ որդիք իմ անդ կորեան համայն ընդ հօրն 'ի միասին,
Ընդ քաջազգոյնս 'ի մերոցըս սիրելեաց առ հասարակ :
Իսկ դու անագորոյն, դու առ 'ի խաղ առնել զինեւ՝
Ըզմանկագոյնն յորդւոց իմոց, որ սրոյ եւ հրոյ ընդ այլ յօգունս
Եղեւ ճարակ, փըրկեալ յինէն հըռչակ հարեր. սիրտ անողորմ,
Յաւէ թերեւըս քեզ զի զժանտ աչըս քո ոչ պարարեցեր
Ի տեսիլն աղիողորմ անշունչ նորին իրանկան.
Կարի իսկ քաջ ականատես այլոցն եղեալ, եւ շօշափեալ
Ըզգխակունսըն ձեռօքդ ամպարըշտօք, ո՛ ապիրատ :

ՊՈԼԻՓՈՆ

Այլ կենդանի ըզնա, տիկին, համարիմ ես, զի եւ ցանկամ.
Նախկին եռանդն այն հանդարտեալ, զոր յաղթութիւն ձըգէ ըզհետ,
Սիրտ իմ ճըմլէր ընդ մանկըտւոյն նախճիր՝ ոյց մարթ էր ինձ ապա
Լինել 'ի հայր քան թագաւոր, գըլով անկին եւ անորդի :
Գիտես եւ դու, զի արդ ուրեմըն ծերութեանըս չիք նեցուկ.
Զի՞նչ օգնէ արքայութիւն՝ որում չիցէ ոք 'ի ժառանգ.
Այլ զի զորդեակըն քո ասես դու կորուսեալ, հաւատամ զայդ.
Եւ եթէ ոչ քեզ որդի, այլ կարեմ տալ այր եւ ըզգահ :

ՄԵՐՈՊԷ

Զի՞նչ լսեմ, զումմէ՞ ասես :

ՊՈԼԻՓՈՆ

Զինէն :

ՄԵՐՈՊԷ

Ո՛վ նոր եւ յեղակարծ
Ո՛վ սոսկալի թըշնամանացս, եւ իշխիցես դու կարկառել
Զարիւնահեղ աջ քո առ մայր անզաւակեալ, ո՛վ վատ, զոր դու

Դու կացուցեր անզաւակ, եւ ակնարկել 'ի յառաջատ
Տեառըն քո՝ զոր դու սպաներ. զերկաթըն զայն, ըզնոյն սուսեր
Թէ ցուցանել ինձ հանդերձիս, ոչ զանգիտեմ, ցոյց աղէ զայն.
Այլ դառնագոյն ինձ պատուհաս գիտելով քո, ով անողորմ,
Ըզդըժընդակ դէմըս քոյին, միշտ առաջի իմ երեւիս.
Եւ 'ի լըրումըն դառնութեան վըշտաց իմոց յանդըգնիս
Բացատրել ինձ լու 'ի լու զեղեռնաւոր կիրըս սըրտիդ:

ՊՈԼԻՓՈՆ

Վըշտացելոյ մօր սըրտառուչ հորձից զեղումն իրաւացի.
Հեղ առաջի իմ ըզգայրոյթ քոյին թափեա սպառըսպուռ.
Այլ զիա՞րդ. մի թէ 'ի սիրտ քո յարատեւք իցեն աղէտք,
Եւ ո՞չ տեղի երբէք տայցեն աղերսական ողոքանաց,
Եւ չիցե՞ս դու կենդանի. երից հընգեակ անցին ցարդ ամք
Յորմէհետէ կեաս յարտասուս եւ 'ի տագնապ օրհասական,
Եւ սակայն ժուժկալես. ըզսիրելիս քո զամենայն
Ասես կորուսեալ, չունել երկիւղ ինչ յումեքէ
Ոչ յոյս եւ ոչ ինչ յաշխարհի աստ սիրելի, եւ սակայն կեաս:
Ապա ուրեմն 'ի դուլ առնել հառաչանաց քոց դեռ ըզգաս
Զի քեզ նորոյ ուրախութեան մարթ է յաւուր միում ծագել,
Ապա չիցէ քո տակաւին զամենայն յոյս 'ի բաց եդեալ:

ՄԵՐՈՊԷ

Ի՞մ, չիք եւ ոչ...

ՊՈԼԻՓՈՆ

Քո իսկ այս, տիկին. քաջիկ ըզմըտաւ ած.
Լիցիս թերեւըս խելամուտ, զի զօրութիւն կենաց քոց
Ամփոփել կարասցէ ստացումն անդրէն արքայութեան:

ՄԵՐՈՊԷ

Քաջ իսկ լինիմ խելամուտ՝ զի չես երբէք եղեալ ծընող,
Այլ բըռնաւոր բոլորովին, զի 'ի գահոյս ունել խորհիս.
Ինձ սիրելի քան զամենայն գահ եղեն այր իմ եւ որդիք,
Եւ գարշիմ մերժիմ 'ի քէն:

ՊՈԼԻՓՈՆ

Լուր ինձ, անսա ինձ Մերոպէ.
Պարտ է ընտրել ինձ այժմիկ արքայուհի գահակից ինձ,
Մինչ հանդարտեալ 'ի սպառ Մեսէնք առհասարակ ինձ հնազանդին.
Այլ գիտեմ զի Կրեսփոնի կեայ յիշատակ 'ի սիրտ յոգունց.



խընդրէ ռամիկըն միշտ ըզտէր իւր կորուսեալ, որ երեւէր
Թերեւըս հեզ եւ արդար 'ի սուղ իւրումն արքայութեան:

ՄԵՐՈՊԷ

Որպիսի էրն իսկ, եւ ոչ հանգոյն այլոց ըստ երեւման:

ՊՈԼԻՓՈՆ

Որպիսի ես. իցէ՞ն թերեւս ինձ կամք հնարիւք վարել ընդ քեզ.
Եւ զոր ոչըն դու երբէք մըտաբերել կարէիր՝
Յայտ առնել քեզ, զի խանդակաթ եմ 'ի սէր քո. լո՛ւր ինձ արդ.
Յուսամ հաճոյ լինել այսուիկ, որչափ առիթ ոք այդքանեաց
Դառն արտասուաց կարիցէ դոլ. լըռեաց վըտանգ, դադարեցին
Արդ 'ի սպառ կիրք անողորմք. իմքս այսօրիկ են հանգամանք.
Իսկ քոյդ՝ կենցաղ ծանրաթախիծ, աշխար ումպէտ եւ բարդ մըթին.
Բարեկամք քո, եթէ գուցեն, կան 'ի բացեայ ամենեքեան
Լուռք եւ համըրք առ երկիւղի, բուռն ամենայն ուստեք է քեզ:
Առաւել դու քան զայլս ըստիպեցեր զիս 'ի սոյն.
Այլ զամենայն միով եւեթ բանիւ կարես յեղափոխել.
Տարապարտ եւ անողորմ քեզ թըշնամանս համարէի,
Եւ թէ կամիս՝ ինձ իսկ 'ի ձեռս, զարքայութիւն Մեսենիոյ՝
Որ քո իսկ է՝ մատուցանել այլում ումեք զայն 'ի կանանց.
Զայս յանցուածոյս իմոյ ընկալ փոխարէն ոչ անփառունակ.
Ցարդ զօրավար քաջ 'ի յաճախ պատերազմունըս կացեալ,
Ահարկու թըշնամեաց եղի զանուն Մեսենեաց,
Հաճոյ է ինձ արդ երեւել թագաւոր լաւ 'ի քաղաքի:
Պատշաճեցո եւ դու զքեզ հանգամանաց ժամանակի,
Քաջ իսկ պարտեալըդ կարես զայդ՝ զոր յաղթականս իսկ ես առնեմ:
Դու այնպիսի 'ի Մեսէնըս սակալի վարես կենցաղ,
Քան զոր չէ մարթ վարել երբէք քեզ յոռեգոյն. խոստովանիմ
Զի թէ ներել ինձ ցուցանես, հաճոյագոյն Մեսենեաց
Առնել ըզլուծ իմ կարիցես, քեւ զամենայն ինչ կարացից:

ՄԵՐՈՊԷ

Հաճոյ ըզքե՞զ առնել լաւաց. եւ ո՞ երբէք կարասցէ զայդ.
Որ դըժպըհիդ անձին իսկ ես, ի՞բըր լիցիս հաճոյ այլոց.
Դու իսկ քեզէն գիտես քանի՜ է ատելի լուծ քո ընաւից,
Եւ ոչ այլ ինչ խընդութիւն քան զայս ըզվիշտ իմ ըմփոփէ.
Թէ կամիցիմ այպն եւ կատակ եւ անուանարկ յաւէրժ դոլ,
Ոչ միայն Մեսենիոյ՝ այլ եւ հանուրց տիեզերաց.

Եւ որ չար եւս է՝ անձին իսկ, յայնժամ քեզ աջ տայ հարսնութեան.
Թէ թուին քեզ վիշտք իմ տանելի այնու զի կեամ, յուսամ հանել
Ըզքեզ ընդ հուպ 'ի պատրանաց այտի, զի սուղ մնան ինձ կեանք:

## ՏԵՍԻԼ Գ.

ՊՈԼԻՓՈՆ

Տարապարտ ըզգուշութիւն. մայր ես, գայցէ օր յորում դու
Փեզէն գաղտնեաց քոց լինիցիս մատնիչ. այո՛ որդի իւր կեայ,
Զինչ այլ ըղձայրն ունի 'ի կեանս. այլ ինձ օգնէ ունել ըզնա
Վեր 'ի վերոյ ընդ մեռեալս, այսպէս թերեւըս կարացից
Հանգուցանել աներկեւան ըղձայրն 'ի նիրհ, մինչ ես հըսկեմ
Միշտ պատրաստ... այլ զի՞նչ օգնեաց հըսկել ինձ ցարդ, ըզմի եւեթ
Ի բանբերաց չեղեւ հընար ինձ ըմբռնել, եւ ոչ գիտել
Ո՛ւր արդեօք ինքն ապաստանեալ կայցէ, հեռի՞ թէ մօտ ուրեք,
Եւ կարէի գըտնել խորհուրդ ինչ 'ի մըտի հաստատութեամբ:
Սակայն ոչ դոյզն ամօք յառաջ տեսանէի ըզՄերոպէ
Թէ ոչ զըւարթ այլ յանմըռունչ ընկըղմեալ վիշտ, որպէս այն
Որ տանիցէ վըխժուց 'ի խորըս սըրտին յոյս տակաւ զարգուն.
Այլ 'ի հերուն հետէ փոգցես եւըս քան զեւս եղեալ նըրկուն,
Ցեղաշըրջեաց ըզգնացըս իւր, եւ արտասուք՝ զորըս սանձէր
Ի սըրտի, արդ յակամայս իւր գան յորդեն յաչըս նորին.
Մեռեալ թերեւս իցէ որդին, այլ հայրն 'ի սիրտըս Մեսենայ
Կենդանի է. եւ չէ ինձ մարթ յանկուցանել յիս ըզնոսա,
Բայց գահակից ըզՄերոպէ ինձ առնելով. ո՛հ քանի՛օն
Է դըժուարին թագաւորել, ունել ըզքեզ ո՛վ գահ 'ի բուն:

---

# ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

## ՏԵՍԻԼ Ա.

ՊՈԼԻՓՈՆ, ԶՕՐԱԿԱՆՔ

Պահապանք, յանցաւորին եւեթ թողցի այսըր մուտ:

## ՏԵՍԻԼ Բ.

ՊՈԼԻՓՈՆ, ԵԳԻՍԹ

ՊՈԼԻՓՈՆ

Մատիր յառաջ. այլ ի՞բըր դու, մանուկ դեռեւըս գոլով,
Անաբար 'ի զայրոյթ եւ 'ի հեղումն ածար արեան:

ԵԳԻՍԹ

Յիրաւի. զամ չաղախեալ յարեան թերեւս անպարտական,
Ճակատագրեալ այսպէս. այլ եմ եւ ես անպարտ:

ՊՈԼԻՓՈՆ

Ուստի՞ ես դու:

ԵԳԻՍԹ

Յելիսէ:

ՊՈԼԻՓՈՆ

Եւ զի՞նչ անուն է քեզ:

ԵԳԻՍԹ

Եգիսթ:

ՊՈԼԻՓՈՆ

Եւ ո՞ հայր քո:

ԵԳԻՍԹ

Անըչան ոք, այլ ոչ ծառայ:

ՊՈԼԻՓՈՆ

Առ ի՞նչ աղէ այսըր գայիր ։

ԵԳԻՍԹ

Տե՛նչ պատանեկան եւ զբօսասէր մըղէր զիս իղձ ։

ՊՈԼԻՓՈՆ

Յայտնի սաս, պատմեա զըստոյգն ինձ, ի՞բր անծար յեղեռն այդքան ·
Զի՞ք ինչ քեզ յոյս այսուհետեւ, բայց թէ անկեղծ խօսիցիս ։

ԵԳԻՍԹ

Ոչ իսկ այլազգ խօսել կարեմ. ազատութեան իմոյ հընարք
Մի՛ լինաւ լիցի ինձ սըտութիւն · 'ի ծերունւոյ հօրէ իմմէ
Անփորձ պատանի փախուցեալ գաղտ յամսոց հետէ
Ընդ քաղաքըս բազումըս շըրջէի թափառական ·
Ուր ուրեմն 'ի սերկեան աւուր դէպ այսըր դէմ եդեալ,
Առ եզերբ Պամիսեայ ընդ ուղ անձուկ եւ անմարդի՝
Ընդ որ հետեւաց է արահետ, մինչդեռ գայի արշաւակի
Անժոյժ անհամբեր 'ի քաղաք այսր հասանել վաղ,
Որ գեղեցիկ ինձ 'ի հեռուստ գայր յերեւան՝ բարձրաբերձ
Ապարանօք փառաւորեալ եւ հոյակապ աշտարակօք,
Եւ ահա ել ոմն ինձ ընդդէմ յոյժ իսկ քան զիս ճեպընթաց ·
Փախըստէի էին գընացքն եւ կերպարան իւր պատանւոյ ,
Շարժուածք յանդըգունք սաստողականք, եւ ակնարկէր
Ինձ 'ի բացէ տեղի տալ իւր · անցըս միում ումեք հազիւ
Տայր անդ ուղին նըրբակածան՝ բարձր ըզգետովըն սեպացեալ
Վըտանգաւոր սաստի, անտի տատասկախիտ անհընպելի ։
Ինձ որ ազատ ծընեալ սովոր եմ օրինաց միայն անսալ,
Եւ ոյց քան զիս երիցագոյնք իցեն՝ տալ այնց եւեթ տեղի,
Թուեցաւ ինձ սաստ իւր դըժպըհի, եւ դէպ ուղիղ գայի յառաջ.
Իսկ նա գոռոզ գոչմամբ ձայնէր · կասիր ո՛վ դու, ապա թէ ոչ . . .
Լուցեալ յայնժամ ցասումն 'ի յիս, կըրկնեմ առ նա · Դու կասիր ։
Մերձ առ իրեարըս մատեաք, ձըգեաց նա զսուր իւր յազդերէ
Եւ 'ի վերայ իմ յարձակէր · չէր իմ սուսեր, այլ սիրտ արի ·
Ըզկայ առի մինչեւ եհաս, եւ ընդ սուսերբ իւրով մըտեալ
Մածեալ զիւրեւ, հարի երագ քան զոր ասեմն ըզնա զգետնի ·
Ի զուր շարժէր, ընդ ծընգաւ իմով յերկիր ըզնա վարսեալ՝
Երկոքումբք ձեռօք կալայ զաջ իւր անշարժ ուժգնապինդ ·
Ընդունայն մըրընչէր · եւ իբրեւ յոյժ անհաւասար



Զանձն ընդ իս ծանեաւ 'ի կռիւ, ըզպարտութիւն յանձն էառ կեղծ ։
Հաւատացեալ նըմա, թողի ըզնա ազատ · իսկ նա դաւով
Ետ ինձ երագ զայս հարուած՝ որ լոկ ըզձորձս իմ եհերձ
Սահեալ 'ի բաց · թեթեւ յիս ցաւ՝ այլ ծանր ազդեաց յիս զայրոյթ ·
Ճարպոյ զակամբ իմով եկեալ՝ զնըղեռնաւոր սուրն 'ի նմանէ
Խլեցի 'ի բաց, եւ կարեվէր անկաւ յարեան իւրում տապաստ ։

ՊՈԼԻՓՈՆ

Արիութիւն դիւցազնական, թէ իցեն վէպքըդ ճըշմարիտ ։

ԵԳԻՍԹ

Այն ինչ հարուածն 'ի ձեռանէ իմմէ կըշռեալ, զիղջ եղեւ ինձ ·
Անսովորս արեան ըզքայ, եւ զարհուրեալ՝ ոչ գիտէի
Զինչ իսկ առնել էր ինձ · իսկոյն զերկաթն 'ի գետ անդըր ձըգեալ,
Խորհեցայ մըղել ըզհետ եւ զեղկելին · կարծէի
Անհետ այնու առնել զեղեռն · եւ արարի իսկ այնպէս ·
Ի՛բր անսովոր եմ տես յոճիր · եւ ո՜վ իմում անմըտութեան,
Շաղախեալ այնպէս արեամբ որպէս էի, սրացայ անտի՝
Ոչ գիտելով յո երթայի՝ 'ի կամուրջ անդր, ուրանօր
Լեալ՝ 'ի քոյոցըդ ձերբակալ՝ ածայ այսրէն անփախուստ ·
Յարեւ քոյին ահա երդնում՝ զի լռեցի եւ ոչ ինչ ։

ՊՈԼԻՓՈՆ

Յար եւ նըման ճըշմարտութեան թըւին ինձ վէպք քո, մանուկ դու ·
Եւ շարժես իմըն զիս 'ի գութ · այլ պահանջեն իրաւունք
Կըրել քեզ պատուհաս · դըժբաղդութեան քում վարկանիմ
Եւ ոչ չարութեան՝ զընկենուլ քո յալիս գետոյն
Զիրանըն կարեվէր, թերեւըս չեւ անշընչացեալ ·
Ծանրագոյն յոյժ պատահէ այդուիկ եղեւըն քոյին,
Որպէս եւ դու իսկ տեսանես · զի ապիրատ ոք եթէ էր
Այրն այն ըստ քումըդ բանի, որպիսիք են իսկ շուրջ յոգունք
Թափառականք՝ քաղաքային պատերազմաց արգասիք,
Դէպք 'ի բարի քեզ դիպէին · զի սպանելոյն անուն եւեթ
Բաւական առ 'ի փըրկել ըզքեզ թերեւըս գըտանէր ։

ԵԳԻՍԹ

Եղո՜ւկ զինեւ · ճակատագրեալ եթէ իցէ ինձ զոհ մատչել
Ակամայ զառանցանաց, զի՞նչ տէր արքայ կարեմ ասել ·
Ահաւասիկ կամ 'ի կրել որ ինչ պատիժ եւ կամիցիս ·
Ծանր է ինձ, այլ ծանրագոյն գոյր թէ էի ես մեղապարտ ·

Անմեղութիւն եւեթ անձին վկայէ վասն իմ յայտնաբարբառ :
Ձեն ինձ նախնիք վեհք , չեն եւ գանձք , բերեմ զդէմս յանցաւորի ...
Եւ եմ իսկ , զի անսաստեալ ձեզ ով ծընօղք իմ տառապեալք ,
Ի տագնապ մահու լքի ըզձեզ յալիսըդ ծերութեան ,
Եւ զօրհաս իսկ տարաժամ, թերեւըս ձեզ հասուցի :
Թէ տակաւին իցէ , աւա՜ղ, կենդանի հայրն իմ բարեգութ ,
Այն որ զանեղծ ետ ինձ ըզբարս , այն որ եկաց ինձ 'ի տիպար
Լաւութեան , եւ կենդանի էր ինձ նա ինքըն հայելի ,
Զի՞նչ ասիցէ արդ 'ի լըսել զի սպանութեան պարտաւոր
Կամ 'ի Մեսէնա . ո՜հ քան ըզմահ ինձ դառնագոյն է զայս խորհել :

ՊՈԼԻՓՈՆ

Լուր ինձ . արիւնահեղ զանձըն քեզէն խոստովանեալ ,
Գիտես իսկ քա՞ջ զի պարտ էր քեզ տալ պատուհաս երագահաս .
Այլ անկեղծ համարձակ խոստովանել քո զամենայն
Ներողագոյն զիս առ քեզ կացուցանէ , եւ յամեցից
Մինչեւ ըստոյգ եւս ապացոյցք եւ նըշանակք զանձնէ քումմէ
Եւ զառնէն զայնմանէ՝ զոր դու սպաներ՝ գայցեն 'ի լոյս :

## ՏԵՍԻԼ Գ.

### ՄԵՐՈՊԷ, ՊՈԼԻՓՈՆ, ԵԳԻՍԹ

ՊՈԼԻՓՈՆ

Եւ ո՞րպէս , Մերոպէ , առ ի՞ս գաս դու ! Է՞ր աղագաւ :

ՄԵՐՈՊԷ

Զըրոյց , զոր արդ իսկ լըւայ , ածէ զիս այսր . ըստո՞յգ իցէ
Զի սպանեալ ոք եւ յալիս 'ի սպանողէն է ընկեցեալ :

ՊՈԼԻՓՈՆ

Ցոյժ իսկ ըստոյգ , եւ սա ահա առն այնորիկ է սպանող :

ՄԵՐՈՊԷ

Զի՞նչ տեսանեմ, սա ! որպիսի՞ նորանըշան նըմանութիւն :

ՊՈԼԻՓՈՆ

Գիտես քանի ընդ առաջնին խաղաղութիւն աշխարհիս
փոյթ է ինձ . այլ 'ի տեսիլ կերպարանաց պատանւոյդ
Եւ 'ի լուր բանից դորա՝ կարծիցես իմն անպարտ ըզդա :



ՄԵՐՈՊԷ

Ճըշմարտիւ , չէ իսկ եւ չէ տեսիլ դորա սպանողի .
Այլ աւա՜ղ, դեռեւս ահա թօրէ արիւն 'ի դմանէ :

ԵԳԻՍԹ

Եւ ո՞ ժըխտէ զայդ , տիկին . քաջ իսկ առնէ զիս դատապարտ
Արիւնս այս . այլ չարութեամբ թէ էր հեղեալ զայն , գիտէի
Եւ լըւանալ յինէն ըզնոյն . դոյզն ինչ աղէք , դէմք անյողդողդ ,
Ցաղջամուղջ յաւիտենից թաղեալ զեղեռն իմ ծածկէին .
Այլ հաւատա , զի խըստագոյն յոյժ պատուհաս կըրեմ 'ի խիղճ
Քան զոր արքայ ինձ պատրաստէ . այլ զի՞նչ առնել կարէի անդ .
Նըժդեհ մենաւոր եւ անծանօթ , առանց զինուց .
Ըզստուեր , զոր հարկ էր ինձ 'ի կիր առնուլ 'ի պահ անձին
Ընդդէմ գոռոզ պատանւոյն , յաջոյ նորին կորզեցի .
Ո՛հ , հաւատա դու ինձ զի չեմ ես 'ի հեղումն արեան սովոր :

ՄԵՐՈՊԷ

Է՞ր ըսպանեալըն այն պատանի :

ԵԳԻՍԹ

Էր համասի ինձ :

ՄԵՐՈՊԷ

Զի՞նչ լըսեմ :

ՊՈԼԻՓՈՆ

Այլ չէր լաւ ոք , որպէս թըւի , թէ ստոյգ իցեն բանք դորա .
Զի փախըստեայ ընդ անմարդի ուղի գընայր արշաւասոյր :

ԵԳԻՍԹ

Նա աւանիկ յիշեմ իսկ արդ զի զկէս դիմացն ընդ վերարկուաւ
Թագուցանէր նա 'ի սկըզբան :

ՄԵՐՈՊԷ

Թագուցանէր ըզդէմըս իւր !
Գընայր նա փախըստեայ ! այլ դու զնա ո՞չ ճանաչէիր :

ԵԳԻՍԹ

Բընաւ իսկ ոչ . հիւր եմ ես աստ , հիւր եւ ինքն իսկ թըւէր ինձ ,
Զի են դեռ յաչս իմ դէմք նորա . հիւր էր անշուշտ , զի կրէր եւ զօրձ
Ի տարազ ելլադական քան թէ 'ի ձեւ մեսենիկ :

3683-66
ՊԵՏ ԿԵՆ Գ... Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм.ССР
ЧИТАЛИЩЕ „КРАСИРАЦ"

ՄԵՐՈՊԷ

Ելիսական ! եղո՛ւկ զինեւ :

ԵԳԻՍԹ

Այո՛ խմեմ յար եւ նըման ,
Զի եմ եւ ես ելիսացի :

ՄԵՐՈՊԷ

Ելիսացի !

ՊՈԼԻՓՈՆ

Այլ դու ընդէր
Այդքան հոգաս եւ տագնապիս :

ՄԵՐՈՊԷ

Ես տագնապեալ ! զի՞նչ ասես :

ՊՈԼԻՓՈՆ

Թըւիս այնպէս . զի աղէ՛ օտարամուտ ոք աննըշան
Թէ սպանանէ զայլ ոք օտար անգոսնելի . . .

ՄԵՐՈՊԷ

Ո՞ գիտէ զի . . .
Ճըշմարիտ է . . . իբր ոչ եթէ ինձ զայնմանէ է ինչ հոգ . . .

ՊՈԼԻՓՈՆ

Թէ չէր ինձ պարտ , ոչ իսկ արդեօք մատուցանել կամէի
Ունկն այդպիսւոյ պարտաւորի . իսկ դու 'ի կրից բնաւից ազատ
Ինձ ոչ սակաւ ածես զարմանս ընդ այդ , զի զի՞ փոյթ իցէ քեզ :

ՄԵՐՈՊԷ

Իղձք եւեթ լըսելոյ , սակայն ինձ յոյժ առաւել
Թըւին հընարք քան թէ դէպք առնել ըղձին աներեւոյթ .
Իսկ դու առ ի՞նչ այդքան ներող առ պարտաւորըն գըտանիս ,
Որ կայ այդպէս յապահովի , չկարեմ իրացդ 'ի վերայ կալ :

ԵԳԻՍԹ

Երկիւղ եւ ոչ թէ հնարք ետուն ինձ ընկենուլ ըզնա յալիս .
Յապահովի կամ որպէս ոք անմեղութեան անձին գիտակ .
Առաւել քան զոր կարծեսըդ վըշտացեալ կայի ես ,
Այլ յաճախէ եւըս քան զեւըս վիշտ իմ արդ 'ի տեսանել
Զի քեզ ցաւէ ընդ առնըն մահ , եւ փարանիս դու եւ դողաս :



ՄԵՐՈՊԷ

Վարանիմ ես ! դողամ ես ! քաւ լիցի ինձ բայց եղկելեաց
Ընդ տառապանս այլոց երագ յուզին աղիք 'ի գորով :

ԵԳԻՍԹ

Ապա եւ յիս գութ քո անկցի , եղուկ եմ ես յոյժ քան ըզնա ,
Եւ նուաղագոյն յոյժ քան ըզնա եմ արժանի ես մահու ·
Նա յանդուգըն գըտաւ 'ի սպանանել զիս ձեռնարկեալ
Տարապարտուց . եւ զի՞նչ օգուտ թէ յաղթեցի ես նըմա ,
Եթէ անարգ եւըս մահու լիցի զըտաւել ինձ 'ի կենաց ,
Նա զի թէ ոչ իսկ մեռայց , ո՞ր պատուհաս կարիցէ
Ընդ նախատինս ազնըւական սըրտի երբէք գալ 'ի կըշիռ :

ՄԵՐՈՊԷ

Սիրտ վէհ կըրես դու 'ի նըկուն քումդ հասակի . բուռն ինձ գոգցես
Առնեն խօսք քո . . . այլ թէ սպանեալըն այն գէթ դեռ կայր . . գէթ
[անուն իւր . . .

ՊՈԼԻՓՈՆ

Եւ զի դարձեալ քեզ իղձք լինին արդ լըսելոյ զայդցանէ ,
Եւ տեսանեմ , Մերոպէ , զի կալ իմ աստ ոչ գիտեմ էր
Խօսիցըդ քոց արկանէ սանձ . . .

ՄԵՐՈՊԷ

Սանձ ! զի՞ ասես , կացցէ ընդ քեզ :

ՊՈԼԻՓՈՆ

Մի . այլ զի դու եթէ գուցէ ինչ առաւել 'ի գիտել
Ի դմանէ տեղեկացիս , թողում միայն ըզդա ընդ քեզ .
Գիտես իսկ զի եմ պատրաստ եւ ըղձանամ առնել ըզքեզ
Ամենայնի տէր եւ իշխան , ո՞րչափ ապա եւս առաւել
Դուզնաքեի այդպիսւոյ . քեզ լիցի անկ դատել ըզդա ,
Տնօրինեսջիր դու ըստ հաճոյս քո զդըմանէ . եւ այս նախկին
Լիցի ինձ ցոյց՝ զի ոչ մերժես եւ որ ինչ այլ խընդիր է իմ :

ՄԵՐՈՊԷ

Ո՞ր այն աղէ :

ՊՈԼԻՓՈՆ

Զայս մի ինչ խընդրեմ 'ի քէն , եւ ո՛ տայր ինձ ,
Մերոպէ , զի սկիզըն այսուիկ արքայութեան քո առնէիր :

## ՏԵՍԻԼ Դ.

### ՄԵՐՈՊԷ, ԵԳԻՍԹ

ԵԳԻՍԹ

Նըւա՞զ ուրեմըն քան զարքայ լինիս առ. իս դու բարեգութ.
Ո՞չ իսկ հասակ մանկութեան իմոյ խօսի զինէն առ քեզ.
Եւ ո՞չ ըղձիրտ իմ ակներեւ, տիկին, 'ի դէմս իմ տեսանես.
Ո՞չ կարեկից մահառիթ վըշտի ծնողաց իմոց լինիս.
Ո՛հ ո՞չ եւ դու իցես մայր, անկցի ընդ մայր իմ գութ 'ի քեզ:

ՄԵՐՈՊԷ

Այո՛ եղէ եւ ես մայր... այո՛... այլ ո՞ գիտէ զի արդ...
Այս ուրեմըն կենդանի է տակաւին մայր քոյին..
Էլիսացի՞ է եւ հայր քո:

ԵԳԻՍԹ

Նա՛ ծերեալ իսկ է 'ի Մեսէնա:

ՄԵՐՈՊԷ

Ի Մեսէնա! եւ զի՞նչ ասես:

ԵԳԻՍԹ

Ի տղայ տիոց լըսէի զայն:

ՄԵՐՈՊԷ

Պոլիդո՞ր թերեւս անուն էր նըմա:

ԵԳԻՍԹ

Ոչ, այլ Կեփիս:

ՄԵՐՈՊԷ

Իսկ հասակ!

ԵԳԻՍԹ

Անցեալ զաւուրբք:

ՄԵՐՈՊԷ

Երկի՞նք, սակայն անուն նորա...
Զի՞նչ նըսեհ, ո՞յք ազգականք էին նորա 'ի Մեսէնա,
Ազնուակա՞ն ոք էր:



ԵԳԻՍԹ

Ոչ, այլ սակաւուց անդոց տէր,
Զորս 'ի հաճոյս իւր մըշակէր հուժկու բազկօք եւ ազատ.
Ընդ գոյս իւր գոհ կեայր երջանիկ կընաւ իւրով եւ որդեկօք:

ՄԵՐՈՊԷ

Եւ ո՞ ըզնա 'ի քաղցրախորժ կենաց անտի ձըգեաց 'ի բաց,
Եւ է՞ր աղագաւ ըզընակութիւն իւր փոխեաց:

ԵԳԻՍԹ

Պատմէր նա սաէպ ինձ յառաջընթին խըռովութեանց աշխարհիս
Բըռնադատեալ 'ի փախուստ, վարեալ աստի հալածական
Յերեսաց բըռնաւորի եւ ոխերիմ իւր թըշնամւոյ.
Մինչ ամենայն ինչ 'ի նախաճիրս արեան յուզէր աստանօր,
Ինքն ըզգողի հարեալ 'ի խնամս որդւոյն... աւա՜ղ, քանզի ըզնա
Տեսանէի 'ի յիշատակ աղէտիցն յողբս համակեալ:

ՄԵՐՈՊԷ

Ծընեալ ապա դու 'ի Մեսէնա, եւ հա՞յր քո զքեզ զերծոյց յԷլիս:

ԵԳԻՍԹ

Ոչ, այլ զեղբարս իմ երիցունս ընդ իւր էած, զորս 'ի նմանէ
Մահ անագորոյն յափըշտակեաց զամենեսին.
Ես միայն ծըդեցի զնախկին կենաց շունչ 'ի յԷլիս,
Վերջին յորդիս իւր... եւ վերջին, հէք հայր, մընամ քեզ՛ թէ մնա-
Անդըստին 'ի տղայ տիոց ըղձանայի տեսանել [ցից.
ԸզՄեսէնա, որպէս զորրանըս մեր՛ ուր հայր իմ եկն 'ի լոյս:

ՄԵՐՈՊԷ

(Ո՛հ զի՞նչ լըսեմ... մանուկ 'ի նոյն ճըշգրիտ 'ի տիս 'ի դէմս 'ի կերպ,
Թըւի գա ինձ... այլ չէ իսկ չէ)..: Բայց ասէիր սուղ ինչ յառաջ
Զի եւ սպանեալն էր յԷլիսէ:

ԵԳԻՍԹ

Այնպէս թըւէր ինձ յերեւման.

ՄԵՐՈՊԷ

Ծածկեա՞լ 'ի դէմս:

ԵԳԻՍԹ

Այո՛:

ՄԵՐՈՊԷ

Ի սիրտ!

ԵԳԻՍԹ

Յոխորտ:

ՄԵՐՈՊԷ

Ի ձեռ!

ԵԳԻՍԹ

Անարգ:

ՄԵՐՈՊԷ

Փախըստակա՛ն:

ԵԳԻՍԹ

Ճեպընթաց հանգոյն գոգցես հալածելոյ,
Եւ լի կասկածանօք առ իս դիմեալ դէպ ուղիղ:

ՄԵՐՈՊԷ

Իսկ դու զնա զի՞ սպաներ անգութ:

ԵԳԻՍԹ

Զի սպանանել նա զիս կամէր:

ՄԵՐՈՊԷ

Ասա՞ց ինչ քեզ ինքն 'ի մահուն:

ԵԳԻՍԹ

Սուղ ինչ կացի ես առ նըմա
Եւ ողբայի ... մինչդեռ նա ինքն 'ի հեծեծանըս կայր մահու:

ՄԵՐՈՊԷ

Հէք եւ թըշուառ:

ԵԳԻՍԹ

Յիշեմ այո՛ որ ինչ 'ի գութ արգեօք շարժէր
Եւ ըղսիրտ անկարեկիր, զի մայրական լինէր լալեօք,
Լալեօք ըղմայր իւր հեկեկէր:



ՄԵՐՈՊԷ

Ըզմայր! եւ դու, ժանտ ապիրատ,
Ըզնա սպաներ եւ ընկեցեր յալիս գետոյն! ա՜յ մահապարտ:

ԵԳԻՍԹ

Եղուկ եմ ես, անկըլսացայ, թերեւս 'ի քեզ իսկ մեղուցեալ.
Այլ առեր իշխանութիւն դու յարքայէ, արա ընդ իս
Զինչ եւ կամիս, վըրէժ սաստիկ խընդրեա յինէն. այլ ի՞բր իսկ ո՛հ,
Մերոպէ, կարէի զքեզ թըշնամանել, զոր յարգէի միշտ 'ի սըրտէ,
Եւ զգըժընդակ աղէտըս քո առ 'ի հօրէ իմմէ լըւեալ,
Արտասուս բազում անգամ ընդ արտասուս իւր խառնէի,
Եւ մաշէր զիս բոց բաղձից տեսանելոյ եւեթ ըզքեզ.
Յաճախ եւ ուխտս երկնից ընդ հօրն իմ ծերունւոյ մատուցի զքէն,
Դեռ եւս ամբիծ յայնժամ ձեռամբ արկեալ ըստէպ խունկ սուրբ 'ի
Վառըն քո առաջի մանուանց իմոցըս թերափոց. [հուր
Ո՛հ ըզքեզ թըշնամանել! տուր ինձ պատիժ, արժանի եմ,
Խընդրեմ 'ի քէն, ըղձանամ զայն. այլ ի՞բր էր մարթ ունել նըմա
Աչերս ընդ քեզ, որ ընդ զըժնեայ դէմս 'ի յանձին բերէր սիրտ ժանտ:
Բայց չէր թերեւս այնպիսի ոք, այլ ժանտացեալ 'ի հարկէ..
Է՞հ զի՞նչ ասեմ, թէ չէր անպարտ, ոչ ողբայիր դու ըզնա.
Նա միայն ես եմ պարտաւոր, ո՛ն ապա առ յինէն վըրէժ:

ՄԵՐՈՊԷ

(Որպիսի՜ բանք, որպիսի՜ ողբք, զի՞նչ այդպիսիկ զուշակիցեն.
Բուռն ինձ առնէ դա ակամայ հեզուլ ընդ իւր արտասուս.)
Զինէն խօսէր հայր քո ընդ քեզ!

ԵԳԻՍԹ

Ո՛հ եւ քանիցս ասէր նա ցիս
Ըզարախողխող առնէ քումմէ եւ զորդեկացդ բսպանելոյ:

ՄԵՐՈՊԷ

Զորդեկացս! ո՛հ երկինք:

ԵԳԻՍԹ

Այո՛ զորդւոց քոց երեցունց
Խողխողելոյ առ հասարակ 'ի խուժադուժ ըռնաւորէն,
Որոյ տեսիլ վայրագ առնէր ինձ մըռընչել սուղ ինչ յառաջ.
Ցոյժ առաւել հաճոյ է ինձ քան ըզգորով իւր սաստ քոյին:

ЧИТАЛИЩЕ „КРАСИРАЦ“

ՄԵՐՈՊԷ

(Ոչ եւըս ժոյժ ունել կարեմ բանից դորա. այն ինչ 'ի գութ
Սիրտ իմ մտէ, խէթ ահարկու մըղէ անդրէն զիս 'ի զայրոյթ,
Ի նուաճելն ըզգութ՝ անդրէն 'ի լուր դորա եւ 'ի տեսիլ
Բըռնադատիմ յարտասուս):

ԵԳԻՍԹ

Զի՞ է տագնապդ այդ 'ի սըրտիդ,
Զի՞ 'նդ քեզ խօսիս. թէ յիս գըթաս, ընդէ՞ր սըրտիւ քում ոչ լսես:

ՄԵՐՈՊԷ

(Եղուկ եմ ես, զի՞նչ արարից.) ոչ դատապարտ առնել ըզքեզ,
Ո՛վ պատանեակ, եւ ոչ անպարտ կարեմ 'ի բաց արձակել.
Կաց յարքունիս աստ առ ժամս, ընդ հուպ տեսից ըզքեզ դարձեալ
Ըզկենաց քոց պատահարս ած ըզմըտաւ մանրակըրկիտ,
Յիշեա ըզմէն մի գործ եւ բան, եւ զնըշանակս ըսպանելոյն.
Յուշ ած եւ զհօր քո զամենայն ըզդուզնաքեայ բանս իսկ նորին.
Այլ գիտիցե՞ս ըստուգիւ զի ծերունւոյ ծնողի քո
Զիցէ երբէք փոխեալ զանուն իւր, ասա ինձ:

ԵԳԻՍԹ

Ես բնաւ իսկ ոչ.
Թոթովել ըզնա Կեփիս անդուստ 'ի տղայ տիոց ուսայ.
Եւ զոր օրէն նա 'ի պատմել իւր ըզփախուստն 'ի Մեսենայ
Պատուիրէր չասել ումեք, ասէր արդեօք ինձ եւ զայն՝
Թէ էր փոխեալ զանուն իւր, գիտելով քաջ՝ զի մահու չափ
Լըուէի զայն. յայտնեցի այս՝ զայն քեզ զի մեսենիկ
Էր նա, այլ զի՞նչ մարթէր ինձ թագուցանել երբէք 'ի քէն:

ՄԵՐՈՊԷ

Ի՛հ բաւ է արդ, հանգիր առ այժմ. (հարկ է մեկնել ինձ առ իս
Հեղուլ ծիգ զարտասուս ըզմինչեւ ցարդ բըռնազբօսեալ):
Քեզ զարքունիքըս տամ 'ի բանտ, դարձայց ընդ փոյթ անդրէն 'ի
Եւ արասցես մանրապատում ինձ վերըստին զամենայն, [լուր,
Պատասխանել ինձ պարապով եւ լիով մի ըստ միոջէ,
Զի գտից ըզքեզ ճըշմարտախօս. այլ չէին քո դէմք ըստախօսի:



# ՏԵՍԻԼ Ե.

ԵԳԻՍԹ

Զի՞ է զի կրէ յանձին 'ի լուր բանից իմոց կիրս այդպիսի.
Մերթ քան ըզվագըր կատաղի յիս յարձակեալ զայրագին,
Մերթ քան ըզմայր խօսի ողոք, խանդաղատի նա զինեւ,
Հայի գըթով եւ արտասուէ. զի՞ սպանելոյն առթել դըմա
Վիշտ այդպիսի. թէ չէր վաղու եւս ինքն 'ի սպառ անզաւակեալ,
Համարէի իմըն զորդի դորա սպանեալ. այլ ո՞ գիտէ,
Այլ ոք թերեւս 'ի սիրելեաց իւրոց էր նա, կամ թէ ումեք
Ա՛ն ունէր խորհըրդոց իւրոց 'ի նպաստ, եւ նա ինքն էր...
Այլ զուր խօսիմ, գիտեմ ինչ ոչ. տես արդ Եգիսթ, տես աղէ արդ,
Քանի՜ բարուք ազդէր քեզ հայր քո ծերունի՝ մի՛ նախանձել
Աւագանւոյ, զի նոքա թըշուառագոյնք են քան ըզմեզ.
Ճըշմարիտ եւ կարի իսկ է ճըշմարիտ, եւ ոչ կարեմ
Աւաղել արդ ըզբախտ իմ, որպիսի ինչ եւ իցէ այն,
Ցորչափ տեսանեմ վեհագունին իսկ 'ի տիկնայց
Այսպիսի աղիողորմ թողեալ լըքեալ վարել կենցաղ:
Այլ հասանէ ահա գիշեր, եւ ելանել աստի չկարեմ.
Անցից յառաջ ընդ արքունիս սըրբել մաքրել զանձն յարենէ.
Այսպէս յանկարծ մարթէր ինձ, ո՛հ, սըրբել յանձնէ եւ ըզմեղանս.
Այլ գիտեն զամենայն, գիտեն երկինք արդարադատ,
Թող պատուհաս ածցեն զինեւ, եթէ իցեմ արժանի:

---

# ՀԱՆԴԷՍ ԵՐՐՈՐԴ

## ՏԵՍԻԼ Ա.

ՊՈԼԻԴՈՐ

Ընդ այդ խորին այսր հասանեմ, դէպք ինձ 'ի ճաշ պատահեցին
Մըտանել անտեսաբար. ո՛ արքունիք զարհուրելի,
Զոր յետ երից հընգից ամաց արդ ուր ուրեմն տեսանեմ.
Լի արհաւրօք Թողի ըզքեզ յորում աւուր 'ի գըրկի
Ըզբարւոյ արքային իմոյ բարձեալ զուստրը միակ,
Ածէի յանքոյթ զարեան նորա նըշխար պաշտելի.
Այլ արդ իբր այլազգ սոսկմամբ շուրջ պաշարեալ գտանեմ այսրէն.
Այս է, աւա՜ղ, այս է կամարըն Կրեսփոնի, այս իւր ճարմանդ,
Ուր Ալկիդեայ կան արութիւնքըն քանդակեալ. կըրկին երկեամ
Ի ձեռին իմում էր սա. եւ արդ լուսինք ըննուն քըսան
Յորմէհետէ ես ինքնին ածէի զսա յազդեր իւրում.
Ո՛վ անըզգայ պատանեակ, դու ոչ լըսար ինձ, խուլ եղեր
Խրատուց ալեւորիս. եւ արդ ահա արգասիք ...
Ո՜հ քանի՛ դառն եղեն ինձ կեանք յամէ հետէ զքեզ կորուսեալ,
Զուր 'ի խընդիր շըրջիմ ըզհետ քո այս ամիք են վեցեակ.
Արդ 'ի ծնընդեանըդ քո յերկիր, մերձ աստանոր առ գետեզերը,
Ընդ ամայի ուղի զդիակըն քո գտանեմ արիւնողող.
Եղո՜ւկ զինեւ, եւ զի՞նչ առնել իցէ ինձ արդ ... այլ լիցի ինձ
Տեսանել նախ ըզՄերոպէ. յաջողեսցեն ինձ երկինք
Եւ անել առ նա մինչ չեւ լեալ յանդիման բըռնաւորին,
Զայս եւեթ ցանկամ. ուստի՞ է ինձ երկիւղ այսուհետեւ.
Զի՞նչ եւս է ինձ կորուսանել, եթէ բարձաւ յինէն 'ի բաց
Կրեսփոնեակն իմ մանկիկ ..., այլ ո՞ գիտէ, գուցէ խաբիմ,
Գուցէ ... այլ ե՞րբ իցէ հընար ... Թերեւըս մայր իւր գիտիցէ.
Իսկ եթէ ոչ, ո՞հ, զի՞արդ զուժել ըզմա կարիցեմ ես
Ըզդոյժըն սոսկալի. այլ եւ լռել զայն իցէ՞ մարթ.
Ո՛վ դէք. այլ գայ հասանէ ոք. Թագիցուք աստ ... մի՛, կին է դա,
Եւ միայնակ ... Թըռի դա ինձ ... ինքն է, եկցուք ընդ առաջ:



## ՏԵՍԻԼ Բ.

ՊՈԼԻԴՈՐ

Դըշխոյ տիկին:

ՄԵՐՈՊԷ

Ո՜հ ո՞ իցէ որ աստ յանունդ յայդ կոչէ զիս.
Ո՞ ծերունիդ դու իցես. ասա՛ եւ զի՞նչ տեսանեմ ես,
Զիցէ՞ իսկ մարթ թէ խաբիցիմ, դո՛ւ ինքն իցես Պոլիդոր:

ՊՈԼԻԴՈՐ

Այո՛ տիկին:

ՄԵՐՈՊԷ

Իսկ որդեակն իմ ! .. կեանս ածես ինձ թէ մահ, խօսեաց:

ՊՈԼԻԴՈՐ

Շնորհեն ուրեմն ինձ երկինք անդրէն ըզքեզ տեսանել արդ,
Եւ համբոյր սըրբազանի աջոյդ դարձեալ մատուցանել:

ՄԵՐՈՊԷ

Իսկ որդեակն իմ ! .. ասա ինձ:

ՊՈԼԻԴՈՐ

Ո՞վ դէք, աւաղ կարիցե՞մ ասել:

ՄԵՐՈՊԷ

Կարես, չեւ եւս է ոք աստ. գըրնամ ընդ այդըն միայնակ
Ի չիրիմ Կրեսփոնի հանապազօր արտասուել անդ:

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛վ չիրիմ լաւագունին 'ի Թագաւորս աշխարհի.
Ո՞ տայր ինձ 'ի վերայ քո արձակել ըզշունչ յետին:

ՄԵՐՈՊԷ

Հա՛պա պատմեա, սիրտ իմ տոփէ. զի՞ յամեցեր, եւ զի՞ տըխուր
Դարձ առնես. գնացե՞ր ըզհետ իւր հետազօտ, գըտե՞ր ըզնա,
Խօսեաց. վեցեակ լուսինք են արդ զի քո մեկնեալ է յԷլիսէ.
Յամէ հետէ կամ 'ի տագնապ մահու տուայտեալ հանապազօր.

ՊՈԼԻԴՈՐ

Աւա՜ղ, քանի՜ արտօսր հեղի ած ըզմըտաւ. ո՜չ լըւար ինչ։

ՄԵՐՈՊԷ

Ոչ ինչ, այլ դու . . .

ՊՈԼԻԴՈՐ

Շըրջեցայ անտի ընդ կէս Հելլենաստան.
Ծերունւոյ սըրտի խմում ոյժ եռուն սէր յոյս եւ խիղճ մեծ.
Չոգայ 'ի Կելլենէ յՈլիմպիա 'ի Կորընթոս,
Չոգայ յԱրգոս 'ի Պիլէ եւ 'ի Սպարտա 'ի խընդիր,
Եւ յայլ քաղաքս յոգունս, եւ ոչ ուրեք գըտի ինչ նըշանակ.
Ո՞ գիտէ ցո՞ր վայր եռանդըն մանկութեան եւ սիրտ արի
Մըղեաց ըզնա. ո՜հ որդեակ, ցանկութիւն յոյժ էր 'ի քեզ
Ցածել շըրջել ընդ երկիր, զըննել գիտել եւ տեսանել.
Ո՛վ մեծին Ակիդեայ արժանաւորըդ պայազատ,
Ձէր իսկ քեզ մարթ 'ի հիւղ իմ կալ. թէ եւ չէիր դու քեզ ծանօթ,
Այլ ածէին ըզքեզ 'ի յայտ ամենայն գործք քո եւ իմաստք։

ՄԵՐՈՊԷ

Ո՜հ քանի՜ կիրք այլայլախառն 'ի լուր բանից քոց յիս զարթնուն.
Ա՜հ, ո՞ւր իցես որդեակ իմ ո՞ւր։ . . Եւ ճըշմարիտ է զոր ասես,
Արժանաւո՛ր հաւուց իւրոց զարգանայր գայր նա յաւագոյթ։

ՊՈԼԻԴՈՐ

Արժանաւոր! երդուեալ 'ի գիս, չիք իմ տեսեալ բոյս բարուց
Քաջայանդուգն ազնըւական պարզ եւ համեստ քան ըզնորայն,
Եւ ոչ ատոխք հըզօրագոյն եւ կերպարան գեղադիտակ.
Տեսիլ արիական, եւ սիրտ այնքան բարեհամբոյր. . .
Զի՞նչ իսկ 'ի քեզ պակասէր, միակ ալեաց իմոց նեցուկ.
Ի քեզ կեայր հարսն իմ պառաւեալ, 'ի քեզ միայն կէի եւ ես.
Յոյժ առաւել քան զորդի էիր դու մեզ։ . . Ո՜հ թէ յանկարծ
Տեսեալ էր քո ըզնա ընդ մեզ . . . իբր ըզգալով 'ի սըրտի
Զաղդ իւր վէհ, ըստ հաճոյս իւր տիրէր մեզ քաղցր իշխանութեամբ.
Այլ կամք 'ի նմա ազնըւականք միշտ էին, միշտ իսկ արդար։
Ո՜հ ոչ կարեմ, որդեակ իմ, ոչ կարեմ ածել ըզքեզ 'ի յուշ
Առանց աղբերս արտասուաց յարտեւանացըս հոսելոյ։

ՄԵՐՈՊԷ

Ինձ իսկ առնես դու արտասուել առ տըրտմախառըն խընդութեան.



Ե՞րբ միւսանգամ ինձ ո՛վ դիք ե՞րբ, տացի ըզնա տեսանել.
Ա՞յժըմ, որդեակ իմ, պարտ էր ինձ գիտել զայդքան շընորհըս քո,
Ա՞յժըմ մինչ ոչ եւըս գիտեմ դու ո՛ւրանօր յածեալ շըրջիս։

ՊՈԼԻԴՈՐ

Ո՜հ որպիսի՜ վիշտ եւ քանի՜ կըծէի տագնապ՝ զի չէր ինձ մարթ
Տալ քեզ՝ գիտել ինչ աւելի, բայց զուղջունէ եւեթ նորին.
Այլ վըտանգ մեծ էր վըստահել ինձ յոք. հազիւ թէ իշխէի
Ըզպայմանեալըն առհաւատչեայ 'ի զեկուցումն յըղել առ քեզ
Զի էր մեկնեալ նա յինէն, եւ 'ի խընդիր իւր շըրջէի։

ՄԵՐՈՊԷ

Ո՛վ չարագոյժ առհաւատչեայ, իցի՜ւ չէիր առ իս հասեալ.
Յայնժամ օրէ եւ առ յապայ բարձաւ յինէն խաղաղութիւն.
Եւ զի՞նչ ասեմ խաղաղութիւն. ո՜չ գիտես . . . բիւր կասկածանք.
Եւ արհաւիրք զիս քըստմնելիք, տխուր անէծք կամ ճըշմարիտք
Միշտ տագնապեն, ոչ կարեմ արտեւանաց իմոց տալ նինջ.
Եւ թէ ստիպէ երբեք բնութիւն փառակապել 'ի վըշտաց
Զըգայութիւնս իմ 'ի թըմբիր, երազք յայնժամ անդոհականք
Եւըս քան զեւըս նեղեն զիս քան արթնութիւն երկարաձիգ.
Մերթ տեսանեմ ըզնա մեւրիկ 'ի ցընցոտիս, մոլորական
Անդէտ ուղւոյն, խաղ կոյր բաղդին, եւ ծաղըր սէգ աւագանւոյ,
Սըրտաբեկ 'ի բաց մերժեալ նախատանօք, եղո՜ւկ հէքիս.
Է զի նկատեմ ըզնա 'ի մէջ մըրըշող ալեաց հեղձամըղձուկ,
Մ'երթ 'ի շըղթայս իբրեւ ըստրուկ կապեալ ոտիւք եւ ձեռօք,
Եւ մերթ կալեալ 'ի սրիկայից եւ խողխողեալ չարալըլուկ.
Սիրտ իմ տրոփէ անհանգիստ, ո՛վ դիք, ըզցայգ եւ ըզցերեկ,
Եւ զա ուրեք ոք տեսանեմ 'ի ժանտ բախտէն նետահար,
Խորհիմ յորդեակն իմ եւ դողամ, մածնու արիւն իմ առ ահի.
Զեւ 'ի վըշտէ միօջէ զերծ՝ ա՛յլ չարագոյն ինձ հասանէ.
Հաւատայցե՞ս, ամ՛ 'ի յերէկըն պատանի առ գետեզերը
Ըսպանեալ մենամարտի, եւ յալիս անդր 'ի սպանողէն
Արկեալ առ երկեւղի, խըռովեցոյց զոգի իմ յոյժ
Եւ խըռովէ իսկ տակաւին. օտարական ոք ասի լեալ . . .

ՊՈԼԻԴՈՐ

Օտարական! ըսպանեալ! առ գետեզերբ! յերէկն! ո՛վ դիք.

ՄԵՐՈՊԷ

Եւ առ ի՞նչ ըղձողանի հարկանիս դու, աղէ ասա,
Գուցէ կասկած իմ... այլ աւա՜ղ... արտասուես դու! եւ հատանի
Գոյն երեսացդ! հազիւ կարես կալ դու կանգուն 'ի յոտին!

ՊՈԼԻԴՈՐ

(Եղո՜ւկ զինեւ. զի՞նչ ինձ առնել իցէ, եւ զի՞նչ ասել դըմա)։

ՄԵՐՈՊԷ

Զի՞նչ ընդ անձըն խօսիս, խօսեաց առ իս, զի՞նչ խորհիս.
Ասա զոր գիտես, կամիմ լսել, զի՞ զանգիտես.
Բարձ ըղկասկածանըս զայս յինէն, հա՛պա ո՛ն...

ՊՈԼԻԴՈՐ

Եւ խօսել իսկ ոչ զօրեմ, պակասէ շունչ ինձ եւ բարբառ։

ՄԵՐՈՊԷ

Արհաւիրք ունին զիս, ոչ եւս իշխեմ հարցանել ինչ.
Այլ մի այդպէս, կամիմ գիտել. ընդէ՞ր իսկ կեամ, թէ չիցեմ մայր.
Ասա դու արդ, քանզի գիտես. ըսպանեալն այն...

ՊՈԼԻԴՈՐ

Գիտեմ ինչ ոչ։

ՄԵՐՈՊԷ

Հրամայեմ ասել։

ՊՈԼԻԴՈՐ

Տիկին, ճանաչէ՞ս դու զկամարըս զայս։

ՄԵՐՈՊԷ

Ցի՞նչ տեսանեմ, ո՜հ կարմրորակ դեռ կայլակէ այսր արեան։
Ո՜վ դիք, ծանեայ Կրեսփոնի է կամարդ այդ... մեռանիմ ես։

ՊՈԼԻԴՈՐ

Առաւօտուս ժամու յառաջ գըտի զայդ, ո՜հ, արիւնոզող,
Ըսպանելոյ ուրուք անշուշտ առ գետեզերըըն սրախողխող.
Մի՛ արդեօք իցէ սպանեալն այն որդին քո։

ՄԵՐՈՊԷ

Ո՛րպիսի մահ...
Ո՜վ բախտ եղեռնաւոր. ո՜հ ես ընդէ՞ր կեամ տակաւին.



Այլ դու այդու զգուշեաւ զաւանդըն զայն անգին պահպանեցեր.
Եղո՜ւկ իմուս անգիտութեան, ո՜ւմ ըղջոյս իմ, ո՜ւմ ըղկեանս իմ
Հաւատացի. ո՞չ ապաքէն պարտ էր քեզ կալ միշտ առընթեր.
Ո՞ր սուր կարէր ըսպանանել ըզնա մինչեւ բարձեալ զումպէտ
Երկարաձիգ կեանըս քո. այլ դու, աւա՜ղ, լռես եւ լաս...
Ճակատագրին է եւ ոչ քո եղեռնըդ այդ, ներեա ինձ.
Մայր եմ... ո՜հ ոչ, ոչ եւս եմ մայր... ինձ մեռանել...

ՊՈԼԻԴՈՐ

Եղո՜ւկ հիքիս.
Եմ իսկ ցասման քում արժանի, այլ գիտեն դիք զի եմ անպարտ։

ՄԵՐՈՊԷ

Ցայնմ ահագին գիշերի 'ի տալն իմում 'ի գիրկըս քո,
Ո՜հ, դուշակէր ինձ սիրտ իմ զայդ. ոչ եւս, ասէր, տեսցես ըզդա
Մանրիկ թաթիկօքըն փարեալ զուլամբըդ քով. թըւէր գիտել
Գոգցես, ո՜վ դիք, զի հատանէր նըմա մեկնել յինէն անդարձ.
Հընդիցս երրեակ ամք չարաչար ահիւ 'ի յոգըըս հոլովեալ
Եւ 'ի մնոտի ակընկալիս, ո՜ր աղէ արդ առին վախճան.
Արդ զայնքանեաց կիրըս վըշտաց եւ զժանտ տեսլեան Պոլիփոնեայ
Հասանէ ինձ կորուսանել միահաղոյն ըսպառըսպառ։
Եւ ո՞րպէս. 'ի ձեռըն վատ մանկան միոյ, եղուկ եմ ես,
Հանդէպ աչաց, 'ի թաղմանէ իսկ զուրկ. որդեակ իմ, ո՜հ, որդեակ.
Տա՞յր ով ըզքեզ գէթ դիակն անշընչացեալ ընդգըրկել ինձ,
Գէթ արտասուօք թանալ զայն, եւ մեռանել անկեալ ըզքեւ։

ՊՈԼԻԴՈՐ

Իսկ ես որ զինքն երիցս հընգեակ ամ հայրօրէն յանձանձէի,
Տեսանեմ ըզնա այժմիկ այսպէս յինէն յափըշտակեալ,
Աւա՜ղ, եւ զսիրտ քո կարեվէր յինէն հարեալ. այլ ի՞բր 'ի քէն
կարէի ես լռել զայն։

ՄԵՐՈՊԷ

Զըճեայ ինչ այլ, բայց մեռանել։

# ՏԵՍԻԼ Գ.

## ՊՈԼԻՓՈՆ, ՄԵՐՈՊԷ, ՊՈԼԻԴՈՐ

ՊՈԼԻՓՈՆ

Ի ձայն ողբոց եւ անսովոր գուժի գամ այսր հասանեմ.
Եւ ո՞ իցես, տէր դու, եւ զի՞նչ ածեալ բերես մեզ զրոյց:

ՄԵՐՈՊԷ

Ա՞յժմ գաս 'ի ձայն ողբոց՝ զոր բռնաւոր լսէիր դու.
Յարքունիս աստ յօրէ յորմէ գայր զուգաձեմ ընդ քեզ մահ.
Ուրախ լեր արդ տեսանելով զիս աստ ուրեմն անզաւակեալ,
Դու՝ որոյ սիրտ պարարի ողբովք այլոց:

ՊՈԼԻՓՈՆ

Ուրեմն կենա՞ր
Որդեակըն քո, զոր ժխտէիր:

ՄԵՐՈՊԷ

Այդչափ ապուշ ուրեմն էիր
Բռնաւոր դու, զի կարծէիր ըզնա մեռեալ մինչ նա կէր.
Գիտես իսկ զի՞նչ կեանք իմ էին 'ի տեսանել ըզդէմըս քո:
Կեայր նա այս, այլ ծածկէի ես զայն 'ի քէն՝ թագուցեալ յիս
Ըզմիայն յոյս յաւուր միում ըզնա դարձեալ տեսանելոյ
Արհաւիրս ամպարըշտաց, շանթ երկնաւաք վրէժխընդիր
Հօրն եւ եղբարց, մօրն եւ գահուն հաւուց իւրոց եւ նախնեաց.
Եթէ չէր այս, եւ ոչ վայրկեան մի կարէի հանդուրժել
Ի լուր բանիցըդ դըժպըհեաց, 'ի տալ ինձ զաջ քո գարշելի
Եւ զհաշտութիւն ժանտ քան ըզսաստ եւ կապանաց եւ մահու:

ՊՈԼԻՓՈՆ

Այդպիսի՞ տաս դու արխտուր ում գահակիցն ըզքեզ կամէր.
Զոր բռնաւորըն դու կոչես, գըթած է նա եւ քան ըզքեզ.
Այո՝ ոչ ինչ զանխուլ էր ինձ՝ զի էր որդի քո կենդանի,
Ոչ կարացեր պատրել զիս. այլ անբասիր առ ժամս առնեմ
Զիրաւացի աղէտ սըրտիդ. գայցէ թերեւըս ժամանակ...
Այլ հաւատա՞ զըրոյցդ իցէ, ո՞ւր էր որդի քո այդ, ուստի՞
Գայ ծերդ 'ի գոյժ. Էհ չէն ինձ դէմք իւր անծանօթ. թըւի դա ինձ...



ՊՈԼԻԴՈՐ

Ծանօթ եմ քեզ, քաջ նըկատեա. առ արքայի քո Կրեսփոնի
Տեսեալ է քո բազում անգամ զիս, Պոլիդոր եմ ես, այն՝
Որ 'ի հակեալ այլոց ըզգըլուխ առ բըռնաւորդ ըստըրկաբար,
Մեկնեցայ ելի 'ի բաց 'ի Մեսենայ, ծանիր զիս քաջ.
Ալեւորեալ այս՝ 'ի սպառ հերք իմ յամաց, եւ կորացեալ
Թիկունք, եւ դէմք մռայլատիպք 'ի վաստակոց եւ 'ի հոգոց,
Այլ նոյն եմ միշտ, ոխորմագոյն 'ի թըշնամիըդ քո միշտ.
Կեցուցի ես ըզմիակ որդի իմոյս թագաւորի,
Սնուցի ըզնա, դաստիարակ եղէ նըմին, վասըն նորա
Թողի զերկիր իմ հայրենի. եղեն կարի ինձ սիրելի
Կորուստ ընչից եւ փառաց, կորուստ եւ քաղցր հայրենեաց,
Քան զամենայն բախտ՝ առ 'ի սպաս մատուցանել բըռնաւորի:
Աւա՜ղ զի ոչ եւ մահակից եղէ նըմին. եթէ ցանկաս
Առնուլ վըրէժ զանցելոյն, ա՛ռ յինէն զայն, թողեալ ազատ
Ըզմերոպէ յաղէտըս իւր. 'ի տըխրագին կենաց աստի,
Որ ահա մերձ 'ի շիջանել է զերծո զիս. ընդ այն եւեթ,
Ցաւէ ինձ, զի արքայից իմոց արեան ոչ եւս այլ
Մատուցանել կարեմ զառայդ ամս իմ 'ի նուէր. այլ ա՛ռ ընկալ
Ըզդողդոջուն գըլուխ իմ զայս, որպէս զխարդ եւ նըւիրեմ:

ՊՈԼԻՓՈՆ

Ի գութ շարժես զիս, ոչ 'ի սաստ. յոյժ իսկ բարւոք խորհեալ էք
Ինքնահալած գընալ յաքսոր. հըպատակաց ապըստամբից
Ոչ այլ ինչ տամ ես պատուհաս. կեցուցանել քո ըզորըզայն
Ոչ այդ ըզքեզ արքական գործ մեղապարտ կացուցանէ,
Այլ խորհուրդն եղեռնաւոր՝ յոր պահէիր դու ըզնա.
Յորում աւուր տեսանըն քում յաղթեցի ես պատերազմաւ,
Ի ճակատու անդ 'ի վերայ նորա յայնժամ զանձըն քո
Պարտ էր քեզ փոխանակել, յայնժամ ըզկեանս իմ բառնալ...
Սակայն կամիմ 'ի մոռացօնս 'ի սպառ զանցեալըն արդ արկանել.
Այլ ո՞չ արդեօք ճարտարահնար ինչ պաճուճեալ ածես զըրոյց,
Պատմեա ինձ ե՞րբ, ո՞ւր, ի՞բր եւ ո՞յր կարծեալ ըզնա է 'ի կենաց:

ՄԵՐՈՊԷ

Գիտել ըզմահ նորա չիցէ՞ քեզ բաւական, կամի՞ս ապա
Եւ զդի նորին տեսանել, եւ 'ի տեսիլն աղիողորմ
Ըզսիրտ քո վառ եւ զկասկածոտ աներկեւան կացուցանել.

Տեսանել ըղձիւկամբ որդւոյն անկեալ ըզմայրն , հեղով
Արիւնախառն արտասուս . երթ աղէ արդ , հա՛ն դու ըզնա
Ի գետոյն , յանփառունակ այլ 'ի յանդորրը շիրմն ,
Եւ տուր ածել գլխակնացեալ ըզնա 'ի քարշ այսր 'ի Մեսէնս .
Կրեսցէ կրտտանս 'ի մահու , զոր չեղեւ քեզ տալ կենդանւոյն .
Երթ զի որդի իմ է անկեալն այն 'ի մօտոյ սրախողխող :

ՊՈԼԻՓՈՆ

Կարիցեմ հաւատալ զայդ , անդ ընդ նըմա՞ էիր , իբր ձն . . .

ՊՈԼԻԴՈՐ

Աւա՜ղ զի անդըր տարաժամ հասի , սպանեալ արդեօք հինին
Էր եւ գիս ընդ նըմա , ոչ եւս ուրեք տեսի ըզնա :

ՊՈԼԻՓՈՆ

Ո՞րպէս ապա գիտացեր զայդ :

ՊՈԼԻԴՈՐ

Նորին ահա կամարս է այս ,
Զոր Կրեսփոն երբեմն ածէր . դեռ կայլակէ արիւն նորա .
Անդանօր 'ի լիճ արեան գըտի ըզսա . հայեաց , ծանիր ,
Եւ զանգութ անօղորմ ականողիս քո պարարեա .
Պատանի անծանօթ օտարական ելխացի . . .
Ո՜վ դէք , իցի՜ւ չիցէ այնպէս , չիցէ նա ինքն սպանեալն այն :

ՄԵՐՈՊԷ

Ընդ հուպ քեզ մահ իմ մօտալուտ լիցի իրացն առհաւատչեայ .
Այլ դու որ աստ կեղծաւորիս , Թերեւըս դու , ո՛ գիտէ ,
Եսուր ըզնա սպանանել . զի՞ իսկ Թերեւս , անշուշտ արդեօք ,
Զի դեռ այժմիկ խաղաղութեամբ բարբառէիր դու ընդ հինին ,
Ուստի՞ Թէ ոչ 'ի խուժադուժ ըղձից յուղեալ գործդ 'ի քեզ .
Ո՜հ այս՝ ամենեւին , զի պատուիրակ քո էր նա :

ՊՈԼԻՓՈՆ

Ա՞յդչափ ուրեմըն կուրացեալ ես դու 'ի կրից քոց Մերոպէ .
Երդնում զի չէք իմ երբէք տեսեալ ըզնա . եւ եթէ գայր
Զանխըլաբար որդի քո այսըր միայնակ փախըստական
Ծըպտեալ 'ի ձեւ օտար , զիա՞րդ մարթէր գիտել ինձ աղէ զայն ,
Եւ զիա՞րդ ճանաչել երբէք ըզնա սպանողին .
Զի եւ նըմա ոչ ինչ ընդհատ քան ինձ մանուկն էր անծանօթ :



Զի՞նչ եւըս , քո իսկ 'ի սպանողն ո՞չ յուզեցան աղիք 'ի գութ .
Ո՞չ իսկ Թողլի ըզնա ընդ քեզ՝ քեզէն ըզնա հարցափորձել .
Ո՞չ ապաքէն անօրէն կենաց նորա ըզքեզ կացուցի :

ՄԵՐՈՊԷ

Եթէ անպարտ իցես մահուն , յաքռունիս աստ 'ի ձեռըս քո
Կայ պարտաւորն անօրէն . վրէժխընդրութիւն եւեթ տացէ
Սուղ ինչ փայրկեան Թողուլ դեռեւս ըզնա 'ի կեանս . տուր ինձ ապա
Տեսանել զոհ ըզնա անկեալ անվրէժ մահուն Կրեսփոնի
Ըղձիրմաւ իւր ըզդըրուժան փըչել զոգին չարալըլուկ .
Եւ յայնժամ . . .

ՊՈԼԻՓՈՆ

Կարող էի արդարապէս վարձատրել
Զըսպանօղ անօրինին , որ գայր ըզկեանս իմ դաւել ,
Այլ դու տես Թէ իցեմ որպիսի դու զիս համարիս .
Զտախին իմոյ զմահուն կամիմ ինձէն խընդրել ըզվրէժ ,
Եւ խոստանամ քեզ ընդհուպ արդարութիւն լի բովանդակ :

ՄԵՐՈՊԷ

Արդարութիւն խիստ եւ պատրաստ , արդարութիւն պահանջեմ
Անօրինակ եւ սոսկալի . չէք իմ խընդրեալ ինչ 'ի քէն ,
Առաջին եւ վերջին լիցի ինձ այս 'ի քէն խընդիր .
Այլ ճըշմարտի՞ւ խոստանաս զայդ , Թէ 'ի մոտի յոյս վըստահիմ .
Ցագեսցին աչք իմ ըզյետին կայլակ արեան անօրինին .
Զի՜ աչք եւեթ . կամիմ անձամբ ըզնա ինձէն հարկանել ,
Բիւրիցս 'ի սիրտ նորա ուժգին նըստուցանել ըզսուսեր ,
Ի սիրտըն խուժադուժ՝ որ զկիսամեռ որդւոյ իմոյ
Լըսաւ զոզորմ 'ի ձայն ողբոց ըզմայրակոչըն բարբառ ,
Լըսաւ , եւ զնա՝ Թերեւըս չեւ մեռեալ՝ արար գետամոյն .
Էր իսկ արդեօք ըզնա կորզել 'ի չար ժանեաց յամըր մահուն ,
Ինքն իսկ պատմէր ինձ լու 'ի լու առաջի իմ զայս ամենայն .
Լըսէի ես , եւ անպարտ գոգցես ըզնա վարկանէի ,
Քան զըսպանեալըն գոգցես ինձ ըսպանօղըն գութ ածէր :
Գութ ! գիտացէ նա հուպ ընդ հուպ հատուցանել ինձ վըրէժ ,
Խընդրեցից զայն՝ որպէս չիցէ յականջալուր ուրեք եղեալ .
Ես ինքնին մերձընդմերձ եղէց ինձէն վրէժխընդիր .
Խոստացար ինձ , եւ կացուցեր աղէ զխոստումըն քոյին .

ЧИТАЛИЩЕ
„КРАСИРАЦ"

ՊՈԼԻՓՈՆ

Կացուցից որպէս կամիս, դու աստ քեզէն առցես ըղձելէժ.
Ո՛Հ, իցէ՞ թէ կարասցէ արիւն նորա ցածուցանել
Ջատելութիւն՝ զոր 'ի սրտի քում մըթերեալ պահես ինձ,
Իցէ՞ թէ յագեսցի նովաւ զայրոյթ քո կըշտապինդ:
Այլ ես, տիկին, փութամ ճեպիմ տալ պատրաստել զամենայն,
Ոչ եւս առ ժամս արմըկել կամիմ զարդար արտասուս քո,
Այլ զայնոսիկ դարձայց սըրբել վաղ ըստ մամնէ: Իսկ դու կաց աստ,
Մի զսա թողուր. ոչ եւս ըղձնամըս քո խոտեմ, այլ զոր ցարդ
Ունէիրըդ զորդւոյն, կալցիր ըզնոյն արդ ըզմօրէն:

## ՏԵՍԻԼ Դ.

ՊՈԼԻԴՈՐ, ՄԵՐՈՊԷ

ՊՈԼԻԴՈՐ

Եկ 'ի սենեակ քո առ ժամս, եւ թոյլ արա ինձ՝ զի եւ ես
Թըշնամալից եւ տարաժամ ներողութեանս ըռնաւորին
Մեռայց առ ոտըս քո ընդ քեզ, անուն որդւոյդ 'ի շըրթունս իմ,
Մեռայց ողըովք, այլ ըզնորին տեսանելով խընդրեալ ըղձելէժ.
Եկ ծն եւ լեր ինձ ունկընդիր. եթէ ոչ սուղ ինչ տաս Հանգիստ
Տըկար մարմնոյդ, ոչ եւ ըղձեժըն քեզ այդքան ըղձալի
Տեսցես խընդրեալ դըշխոյ տիկին:

ՄԵՐՈՊԷ

Եթէ միայն տեսից զայն:

---

# ՀԱՆԴԷՍ ՉՈՐՐՈՐԴ

---

## ՏԵՍԻԼ Ա.

ԵԳԻՍԹ

Հրաման է արքայի կալ ինձ մընալ նըմա աստ.
Սահմանեալ ուրեմն իցէ որ ինչ ինձ բախտ կայ առաջի.
Աւասիկ կամ, կազմ եւ պատրաստ ընդունել զայն աներկիւղ.
Գիտել ուսեալ զի եմ անպարտ՝ քաջալերէ սփոփէ զիս.
Այլ դառըն միշտ լիցին ինձ կեանք, թէ շնորհեսցի եւս ինձ կեալ.
Կացցէ սպանեալն յինէն հանդէպ աչաց իմոց Հանապազ:
Թէ քաղցր է ինձ յոյս թողութեան, գիտեն երկինք էր աղագաւ.
Սիրեցեալ Հայր, վասըն քո ուսեալ ցանկամ կեալ տակաւին,
Տեսանել ըզքեզ դարձեալ, դարձուցանել քեզ զոր բարձի
Ջխաղաղութիւն, եւ փակել զարտեւանունըս ծերունւոյդ,
Ում մերձենան աւուրք յետինք. ո՛ապաշնորհ որդի, աւա՜ղ,
Թերեւըս դու նախ քան զօրհաս ճեպեցուցեր նըմա ըզմահ:

## ՏԵՍԻԼ Բ.

ՊՈԼԻԴՈՐ, ԵԳԻՍԹ

ՊՈԼԻԴՈՐ

Թերեւս առ վայր մի Մերոպէ հանդէպ ցըդարձ ըռնաւորին.
Ի չիրիմ անդր առ ժամս երթայց:

ԵԳԻՍԹ

Ո՞ր է բարբառդ այդ՝ զոր լըսեմ.

ՊՈԼԻԴՈՐ

Անդ զուխտ իմ...

ԵԳԻՍԹ

Երկինք, իցէ՞ թէ ըլխալեմ, ծերունիդ այդ...

ՊՈԼԻԴՈՐ

Քաղցր է հեղուլ արտօսր ինձ անդ . . .

ԵԳԻՍԹ

Ոչ սխալեմ. ալիք դորա,
Ոտիցըն ճեմ, եւ ձորձք դորին . . . յիս ծերունիդ, դարձիր առ իս :

ՊՈԼԻԴՈՐ

Բա՛րբէ , ո՞ է որ զիս ձայնէ :

ԵԳԻՍԹ

Հայր իմ:

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛վ դիք , զի՞նչ տեսանեմ.
Դու աստանօր ! դու կենդանի ! ո՜հ ուրանօ՞ր քեզ հանդիպիմ.
Թագիր եղուկ դու , զարհուրիմ, մատնեալ ես դու աստ 'ի կորուստ :

ԵԳԻՍԹ

Այլ թոյլ տուր ինձ ըխուրիցըս նախ փարիլ ըզքեւ . ոչ երկբայիմ
Զի 'ի խընդիր եկեալ իցես այսր 'ի Մեսէնա ըզհետ իմ,
Դիմագրաւեալ վասն իմ 'ի վտանգ ուր քեզ յոգունք են թշնամիք.
Որդի եմ ես խեղ , աւա՜ղ, շնորհիդ այդմիկ չեմ արժանի ,
Զի 'ի մեկնելըն 'ի քէն 'ի բաց յանցեայ ընդդէմ քո յոյժ յանցեայ :

ՊՈԼԻԴՈՐ

Ի յորդելոյ արտասուաց . . . գոգցես խօսել իսկ ոչ կարեմ.
Փախիր թագիր , զի քեզ վըտանգ մեծ 'ի վերայ կայ մօտալուտ .
Ո՞րպէս դու աստ 'ի Մեսէնա , ո՞րպէս զիա՞րդ յարքունիս աստ .

ԵԳԻՍԹ

Ի չար ժամու գըտեր զիս հայր իմ յարքունիս աստ բանտարգել.
Չունիմ ժոյժ հայր իմ խոստովան լինել . 'ի մահ Նախատանաց
Հասցէ աւա՜ղ ինձ հուպ ընդ հուպ գոլ դատապարտ իբր ըսպանող.
Լիցի թերեւս ինձ զերծանել, զի թէպէտ եւ ըսպանող՝
Սակայն անպարտ եմ յարենէ . ո՜հ որպիսի՜ գտանիմ որդի :

ՊՈԼԻԴՈՐ

Դէպք յեղակարծ . լցէ թէ դու՞ սպաներ ըզհեւրն առ գետեզեր :



ԵԳԻՍԹ

Ես այո՛ այլ 'ի պահ եւեթ անձին , երդուեալ 'ի գլխ :

ՊՈԼԻԴՈՐ

Աշխատաւոր ճակատագիր . աւա՜ղ խնամոցս իմ հայրենի .
Այլ աստ ինձ . . . բայց գիտասջիր թէ լսիցէ՞ ոք մեզ ուստեք :

ԵԳԻՍԹ

Գիտելով գիտեմ հայր , բայց տեսանեմ եւ ոչ զոք .
Արքունեացըս մուտք փակեալ են , պահապանք ունին զայն ,
Այլ քաջ 'ի բաց հեռի 'ի մէնջ կան , ոչ կարեն լսել ինչ ,
Սակայն զի՞նչ ունիս ասել ինձ , հայր , զոր ոչ գիտիցեմ.
Ահա անկեալ առ ոտըս քո կամ 'ի յերկիր , բաղըրջացեալ
Վաղ 'ի սրտէ , եւ ընդ մեղանս իմ դառն 'ի զեղջ արտօսր հեղեալ,
Զի մահացու եսու քեզ վիշտ , խոստովանիմ զամենայն.
Չեմ արժանի եւ ոչ իմիք , զի թողի զքեզ քաղցրագութ հայր ,
Հայր սիրալիր . ո՜հ թէ 'ի տուն լիցի դառնալ ինձ անդրէն ,
Երդնում 'ի գլխ՝ ոչ եւս անտի մեկնել եւ քայլ մի 'ի բաց :
Ո՜հ զի՞նչ եւ մայր իմ սիրելի . . . հեղու արտօսր եւ նա վասն իմ,
Թըւիմ լսել ըզձայն իւր , տեսանել զինքն ահա եւ լամ .

ՊՈԼԻԴՈՐ

Մի՛ լար որդեակ եւ մի՛ ստիպեր եւ զիս 'ի լալ . կամէի իսկ . . .
Այլ չէ արդ ժամ . . .

ԵԳԻՍԹ

Խիթամ զի մի՛ գուցէ ոք աստ տեսցէ ըզքեզ .
Ծանօթ յոգունց իցես դու աստ , սիրտ իմ տրոփէ զի յայտնեսցիս . . .
Յորպիսի՜ զքեզ արկի 'ի վտանգ , ո՜հ , խոյս տուր եկ 'ի ներքս ընդ իս ,
Ուր ըզգիշերըս զայս հանի երկարաձիգ յարտասուս ,
Եւ թագուցից ըզքեզ անդ , հայր , գոնեա մինչեւ ցերեկյ .
Եթէ երբէք ծանիցեն եւ բռնաւորըն գիտասցէ
Զի ես որդի եմ քո , եղո՜ւկ . այլ եկ , դեռ դոյ ոչ դոյզն ինչ յոյս .
Չէ իսկ եւ չէ ծանրացաւուն այնքան ընդ իս Պոլիփոն ,
Եւ զՄերոպէ բարեգութ յոյժ գըտի առ իս սուղ ինչ յառաջ .
Դեռ դոյ յուսալ ակամայից ինձ յանցանաց թողութիւն :

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛վ դիք , եւ ինքն իսկ Մերոպէ ցասուցեալ քեզ ! հարկ է ինձ
Սուղ ինչ առ նա՝ բայց համարձակ խօսել . . . այլ ո՜հ զի՞նչ արարից ,
Զի՞նչ ասացից , զի՞նչ լռեցից . թագիր դու գէթ վայրիկ մի . . .

ԵԳԻՍԹ

Ի զուր լեցի ինձ թագչել, խընդրեսցեն զիս. Հրաման է ինձ
Կալ մընալ աստ, եւ առ ի՛նչ օգնէ թագչել ինձ աստանօր:

ՊՈԼԻԴՈՐ

Քո չէք երբէք 'ի ծանրագոյն ինչ 'ի վըտանգ մահու անկեալ,
Եւ ոչ իմ 'ի դառնագոյն տագնապ մահու երբէք գըտեալ.
Ինքն իսկ Մերոպէ երդուեալ 'ի քոյդ է 'ի կորուստ.
Եւ Պոլիփոն ընդ մըտերիմըս իւր գայցէ այսր ընդ հուպ,
Հանդերձ Մերոպեաւ, զի իւրովի սա զքեզ կամի
Սպանանել, զի զքեզ կարծէ միակ որդւոյ իւրոյ սպանող:

ԵԳԻՍԹ

Զի՞նչ գործեցի, ո՞չ գոյր նըմա բաց 'ի միոյն, ըզնա՞ սպանել.
Ո՛հ եկ դու մայր անմըխիթար, եւ 'ի սիրտ այսըր ժանտաժուտ
Թափեա զցասումըն քո զայդ. որո՜ւմ մահու եւ կըտտանաց,
Եւ որո՞ց թըշնամանաց չիցեմ երբէք արժանապարտ:

ՊՈԼԻԴՈՐ

Այլ թէ չիցես դու սպանող որդւոյ իւրոյ!..

ԵԳԻՍԹ

Թէ չեմ! ապա...

ՊՈԼԻԴՈՐ

Չես իսկ...

ԵԳԻՍԹ

Եւ զի՞... այլ զիս կարծէ սպանող որդւոյն՝ զոր կորոյս.
Եթէ սփոփումն իցէ վըշտին տալ զիս 'ի մահ, թող եկեսցէ...

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛հ մի՛ չէ նա անզաւակեալ:

ԵԳԻՍԹ

Այլ ըսպանեալն յինէն!.. կամիմ
Յանձն առեալ զամենայն՝ տեսանել զինքն, ընդ իւր խօսել:

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛հ փախիր:

ԵԳԻՍԹ

Ոչ կամիմ, ոչ իսկ կարեմ:



ՊՈԼԻԴՈՐ

Եւ կամ գէթ...

ԵԳԻՍԹ

Այլ եթէ չեմ...

ՊՈԼԻԴՈՐ

Դու ինքն ես... զոր նա ողբայ մեռեալ զորդին:

ԵԳԻՍԹ

Ես! զի՞նչ ասես. ես եմ! դու չե՞ս իմ հայր! որդի՛ն եմ Ալկիդեայ!

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛վ դիք... լուռ լեր. թէ եւ չիցեմ քո հայր, այլ դու ինձ առաւել
Ես քան զորդի. իմ մազապուր ըզքեզ աստի ապրեցուցեալ,
Ընդ անուամբ Եգիսթեայ անուցի ըզքեզ. եւ պահէի,
Թերեւս ըզքեզ, եղո՜ւկ հիքիս, 'ի յառեգոյն ճակատագիր:

ԵԳԻՍԹ

Գաղտնիք խորին, որում չեւ եւըս ցարդ կարեմ գոլ խելամուտ.
Որպիսի՛ ինչ ոչ գիտեմ յուզումըն գաղտ յիմում սըրտի
Ազդէր յիս սէր առ Մերոպէ 'ի տեսանել իմում ըզնա,
Ընդ հակառակն առ Պոլիփոն ազդէր ատելութիւն եւ զայրոյթ.
Ատելութիւն 'ի նմանէ քան յանօրէն բըռնաւորէ.
Այլ արդ յիշեմ, տեսանեմ արդ, արդ խելամուտ ամենայնի
Արարեր զիս. ապա ուրեմըն չէ անուն քո Նեփիս:

ՊՈԼԻԴՈՐ

Պոլիդոր է, թագուցի 'ի քէն զանուն իմ եւ ըզբախտ,
Ի մանկական քոց աշխուժիցըդ զանգիտեալ. այլ ո՞րպէս
Եւ ո՞ կարէր գուշակել... ո՜հ անցանէ ժամս, եւ ընդ հուպ...
Եթէ տացեն ինձ երկինք կանխել ասել զՄերոպէ...

ԵԳԻՍԹ

Երկինք՝ որ խնամ թըւին կալեալ 'ի պահ կենաց իմոց ցարդ,
Որ փըրկեցին 'ի տղայ տիոց զիս 'ի հնարից կատաղութեան
Բըռնաւորին ծարաւելոյ արեան իմոյ, որ ետուն
Արիութիւն սիրտ եւ կորով քում ծերութեան ըզպատանւոյ,
Իցէ՞ երբէք թէ թողուցուն ինձ կորընչել 'ի ձեռանէ
Մօր իմոյ. իցէ՞ երբէք թէ ալկիդեան զաւակիս,

Եթէ միայն գըտցի ոք՝ որ զինեսցէ զաջ իմ սուսերդ,
Լիցի զաՀի Հարկանել 'ի փառասիրտ բըռնաւորէն :

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛Հ , ոչ այլ ինչ՝ պատանիդ՝ բայց ըզկորուլ քո նըկատես .
Այլ ըզվըտանգդ , յորում կաս , զայն ես միայն տեսանեմ.
Խորամանկըն Պոլիփոն առ 'ի պատրել ըզՄերոպէ
Ի յոյս սնոտի , եւ ամոքել ըզՀեռ ընաւից ընդդէմ անձին ,
Պատճառի գըթալ յորդին , զոր թէ կարէր՝ մատնէր 'ի մաՀ .
Այլ թէ տեսցէ ըզնա անգութըն կենդանի , դարձցի անդրէն
Յարիւնարբու բարըս իւր գազանայինս , եւ դու սպանցիս .
Ո՛Հ թոյլ տուր ինձ զի երթայց ընդ առաջել Մերոպեայ .
Տակաւին մարթ է ինձ կանխել . . իցէ՞ արդեօք թէ Հասից . . .

ԵԳԻՍԹ

Զօրականըս նըշմարեմ զի այսր առ մեզ գան Հասանեն . . .

ՊՈԼԻԴՈՐ

Բա՜բէ եւ զի՞նչ տեսանեմ, ո՛Հ , գայ Պոլիփոն ընդ Մերոպեայ :

ԵԳԻՍԹ

Եւ զՀետ նոցա զօր բազմագունդ :

ՊՈԼԻԴՈՐ

Զի՞նչ ինձ առնել իցէ որդեակ ,
Կաց դու առ իս . 'ի պաՀ անձին քո դէթ մնայց , երդուեալ 'ի գլխ :

## ՏԵՍԻԼ Գ.

ՊՈԼԻՓՈՆ, ՄԵՐՈՊԷ, ԵԳԻՍԹ, ՊՈԼԻԴՈՐ, ԺՈՂՈՎՈՒՐԴ,
ԶԻՆՈՒՈՐՔ.

ՊՈԼԻՓՈՆ

Ի ձեռըս քո , Մերոպէ , տամ աւասիկ զորդւոյ քոյին
Զըսպանօղն ապիրատ . արկցի 'ի խիստ դա 'ի շըղթայս ,
Եւ յանձնարկել եւեթ քո՝ Հարեալ անկցի սրախողխող,

ՄԵՐՈՊԷ

Եղեռնաւոր ժանտաժուտ , յեղուզակ վատ եւ դաւաճան ,
Որ զձեռըն քո եղծապիղծ թացեր յարիւն որդւոյ իմոյ ,



Արժէ՞ իսկ քոյդ բովանդակ արիւն անարդ առ 'ի տուժել
Ըզմի եւեթ շիթ նորին . թըշուառ էի վաղ իսկ եւ Հէք ,
Դու Հիքագոյն քան զամենայն մարս եւ կանայս կացուցեր զիս .
Պըրկեցէք զօրականք զինքն 'ի կապանս երկաթիս ,
Տուք դըմա անլուր կըտտանս , փըչել ըզշունչ իւր 'ի նոսին .
Ի զընին կամիմ կալ, Հեղուլ արտօսըր ջերաջերմ,
Տալ ինձէն դըմա ոչ մի , այլ բիւր մաՀուընըս սոսկալիս . . .
Այլ եղկելի դու , դարձուցեալ այդուիկ զորդի քո 'ի կենցաղ :

ԵԳԻՍԹ

Ի քեզ եմ ապաստան , յօժարակամ քեզ Մերոպէ
Տըրտմեցելումըդ յիրաւի տեղի տամ մօր մըտադիւր .
Եւ եթէ ոչ իսկ դոքա արկանէին զիս 'ի շըղթայս ,
Որ ինչ եւ կամէիր՝ կարէիր տալ դու ինձ տանջանս .
Է իսկ արդար ցասումըն քո , այլ յուշ լիցի քեզ զի անպարտ
Եւ գըթութեան արժանի դատէիր զիս սուղ ինչ յառաջ . . .

ՄԵՐՈՊԷ

Ե՞ս արժանի զքեզ գըթութեան ! . . (սակայն ազդեն խօսք դորա
Անգիտելի ինչ 'ի յիս : . . թող անդր 'ի բաց , զի՞նչ գութ , զի՞նչ խօսք
Զի՞ յապաղես .) ճ՛ն երթիցուք , 'ի շիրիմ անդր ածէք ըզդա .
Հօրն եւ որդւոց ըսպանելոց ըստուերք յարիւն իւր յագեսցին ,
Եւ իմս իսկ՝ որ Հանդերձիմ ընդ Հուպ ըզՀետ նոցին գընալ:

ՊՈԼԻՓՈՆ

Փոքըր միւս եւս Հաճեաց յամել . ո զօրականք եւ մեծանիկք ,
Վըկայս ըզձեզ առս կամեցայ արդարութեանս առնելի :
Դա ինքըն մայրըդ զայրագնեալ պաՀէր զորդի իւր ինձ ոսոխ .
Սակայն գութք ընդ վիշտըս իւր յուզին 'ի յիս ոչ դուզնաքեայ .
Թէ ինձ ըզնա կենդանւոյն յայտնեալ էր իւր արիաբար ,
Երդնում 'ի գլխ՝ զի խնամէի արդեօք ըզնա որպէս զորդի .
Այլ արդ ըզվըրէժ մաՀու նորին կամիմ խընդրել . լուա՞ք դուք ինձ .
Ժամ է արդ վաղվաղել լընուլ ըզկամըս Մերոպեայ .
Զէ իսկ եւ չէ շատ մի միայն զոՀ այնքանոյ նորին վըշտի :

ԵԳԻՍԹ

Այո՛ ստուերաց Կրեսփոնի եւ այլ իմն արդ անկ է զոՀ .

ՄԵՐՈՊԷ

Զի՞ խօսիս , երթիցուք ճ՛ն .

ՊՈԼԻԴՈՐ

(Ցիս աղաչեմ դըշխոյ տիկին,
Վայրիկ մի եւըս յամեսջիր, ունիմ ասել ինչ քեզ ո՛հ լուր.)

ՄԵՐՈՊԷ

Զի՞ ինձ ասես դու 'ի մըրմունջ. հաւատարիմ դու Կրեսփոնի
Եղեալ ցարդ եւ պահապան որդւոյ նորա, զի՞նչ ընդ այն
Իցէ քեզ արդ. մի՛ գուցէ ողորմիցիս դու սպանողին,
Եւ ցաւէ քեզ ընդ մահ նորա. գուցէ կամիս զի հարուածն այն...

ՊՈԼԻԴՈՐ

Ես ողորմիմ!.. Թող անդր 'ի բաց... այլ մայր ես դու... կաց մընա
Լըսել մանրապատում եւս 'ի դմանէ զանցըս որդւոյդ:

ՊՈԼԻՓՈՆ

Ճանաչէր ուրեմըն դա:

ՄԵՐՈՊԷ

Լըսել! եւ զի՞նչ. յանդըգնիցի՞ս
Յուսայցե՞ս ըզբարկութիւն իմ ամոքել. ո՞չ դա իցէ
Սպանող որդւոյս, ո՞չ դու իսկ ասացեր զայդ, եւ ո՞չ ինքնին
Խոստովան եղեւ դա զայդ, ո՞չ եւ կամարդ արիւնաթոր
Զոր ետուր ինձ՝ վըկայէ զայդ:

ԵԳԻՍԹ

Իմ է կամարդ, երդուեալ 'ի գլխ,
Ի միջոյ իմմէ անկեալ ընդոստուցեալ 'ի ճարմանդէն:

ՊՈԼԻԴՈՐ

Թերեւս այլոյ իցէ կամարդ այդ նորայումն յար եւ նըման,
Եւ պատանին այն ըսպանեալ չիցէ թերեւս որդի քոյին:

ՄԵՐՈՊԷ

Որպիսի՞ նորահնար լըսեմ նիւթեալ դաւ անօրէն.
Զամենեսին իսկ արդ ուրեմըն բըռնաւորդ եղեռնաւոր
Արարե՞ր կաշառակուր, եւ զդա ինքնին՝ որ այնպէս ցարդ
Հաւատարիմն էր ընդ մեզ. եւ գողցես իմն յաղթանակաւ
Կամիս 'ի կեանըս զըսպանող որդւոյ իմոյ, տեսանել
Ըզմահ դորին ըղձակերտեալ լեր 'ի վերոյ, եւ զայդ հընարս...

ՊՈԼԻՓՈՆ

Ցնորիս, տիկին, առ վըշտիդ. ո՞ է որ ոչ տեսանէ արդ...



ՄԵՐՈՊԷ

Եթէ ստուգիւ ըզմահ դորա կամիս, հա՛պա, չըմնայ ինչ այլ
Ինձ 'ի լըսել, չկարեմ ոչ եւըս նըւաճել ըզզայրոյթ,
Արդ եւըս դոյզն ինչ յամեցումն՝ ընդդէմ անձին զիս գըրգռէ.
Զի՞ իսկ 'ի ներքս իցէ գընալ, աստ յանդատակս յայսոսիկ՝
Ուրանօր իսկ ճեմի փեսայն իմ սրախողխող՝ յագեսցի վաղ.
Առէք առ իս ըզսուսերդ, աստ իսկ ինձէն իմով ձեռամբ
Մըխեսցից զայն...

ԵԳԻՍԹ

Ահա քեզ սիրտ իմ մերկանդամ, ո՛հ մայր իմ...

ՊՈԼԻԴՈՐ

Կաց մընա...

ՄԵՐՈՊԷ

Սատակեաց...

ՊՈԼԻԴՈՐ

Ամփոփեա զսուրդ...

ՊՈԼԻՓՈՆ

Իշխեա՞ս ցայդ վայր:

ՄԵՐՈՊԷ

Ո՛ անօրէն... զի՞նչ տեսանեմ. արտասուես դու եւ դողաս!
Ա՞ռ իմէ՞ լըքանին 'ի հարկանել ձեռք իմ ըզդա:

ՊՈԼԻՓՈՆ

Եւ զի՞նչ գաղտնիքդ իցեն, խօսեաց արդ ծերունիդ:

ՊՈԼԻԴՈՐ

Ցիս տէր, խնայեա:

ՊՈԼԻՓՈՆ

Հա՛պա խօսեաց:

ՄԵՐՈՊԷ

Հարից ըզդա:

ՊՈԼԻԴՈՐ

Սա է, սա ինքն:

ՄԵՐՈՊԷ

Ո՞վ, սա ո՞ն:

ՊՈԼԻԴՈՐ

Որդի իմ:

ՄԵՐՈՊԷ

Ի՞նչ եւ ո՞րպէս :

ՊՈԼԻՓՈՆ

Դա որդի քո !

ԵԳԻՍԹ

Է ինձ 'ի հայր :

ՄԵՐՈՊԷ

Սուտ է. սակայն թէ է իսկ՝ է սպանող որդւոյս իմոյ, մեռիր ...

ՊՈԼԻԴՈՐ

Ո՜հ ամփոփեա զսուսերդ, որդի քո է :

ԵԳԻՍԹ

Ո՜հ մայր իմ:

ՄԵՐՈՊԷ

Ո՛վ դիք:

ՊՈԼԻՓՈՆ

Դա՞ :

ՊՈԼԻԴՈՐ

Մայր ես դորա, կեցո զդա :

ՄԵՐՈՊԷ

Որդի իմ է!

ՊՈԼԻՓՈՆ

Դաւ է այդ, զօրականք ո՛ն :

ՄԵՐՈՊԷ

Ես քեզ վահան, որդեակ իմ.
Ո՜հ սիրտ իմ ինձ ազդէ զայն, չեւ ես լցեալ անզաւակեալ:

ՊՈԼԻՓՈՆ

Զօրականք :

ՄԵՐՈՊԷ

Մինչեւ մխեալ յիս, մի՛ հասցէ սուսեր 'ի սա :



ԵԳԻՍԹ

Թող ինձ փարել զգրկալինդ, մայր իմ, զքեւ :

ՊՈԼԻՓՈՆ

Զո՞ր առասպել
Ցնորից հնարեաց ստայնանկդ ածես մեզ արդ. վասն ելուզակ
Որ եւ ոչ ինքըն ժըխտէ զայն, իցէ՞ երբէք արքայորդի,
Եւ կարացի՞ց հաւատալ զայդ, հարէք զդա զօրականք :

ՄԵՐՈՊԷ

Դու ես վատ. ցորչափ իցէ յիս շունչ, որդեակն իմ մի՛ մեռցի :

ՊՈԼԻԴՈՐ

Կրեսփոն է դա. վըկայեն երկինք ինձ զայդ, իւր է կամարդ,
Ուստի եւեթ վըրիպակ 'ի միտըս մեր ծընաւ. ծանօթ եմ ձեզ
Եւ գիտէք արք մեսենացիք, զի ստերդութիւն իմ չիք եղեալ:

ԵԳԻՍԹ

Եւ ո՞չ զկերպարանս իմ ոք 'ի ձէնջ ճանաչէ.
Արքային ձերոյ միակ մընամ զաւակ. չի՞ք ոք 'ի ձեզ
Ի նորին զօրականէ :

ՊՈԼԻՓՈՆ

Սըտէ 'ի գլուխ իւր, սպանցի :

ՄԵՐՈՊԷ

Այլ նախ ... բայց մի՛ ամենեւին :

ԵԳԻՍԹ

Աղէ լուծէք զբազուկս իմ,
Տուք ինձ սուսեր, եւ 'ի սայր սուսերի զանձն իմ ծանուցից :

ՄԵՐՈՊԷ

Որպիսի՜ բանք. ո՜վ հարազատ ձեռ ալկիդեան. ո՞չ ճանաչէք
Զդա 'ի վեհ իմաստիցն եւ 'ի գործոց ամենեքեան.
Եւ դու իսկ, Պոլիփոն, ո՞չ յարհաւրաց քոց իմանաս.
Սարսիր ... այլ ո՜հ, ես սարսիմ. 'ի ծունր անկեալ խնդրեմ՝ ցածիր
Ի գըթութիւն. արքայութիւն՝ յոր գահակից կամէիր զիս
Կամ թէ կամել թըւէիր, քեզ լիցի դահդ յափշտակեալ.
Ներեւալարին որդւոց իմոց, առն իսկ իմոյ ներեւալարին,
Ներեալ լիցի քեզ ամենայն. միակ մընայ ինձ յաշխարհի

Որդեակ իմ այս․ չիք իմ 'ի քէն այլ ինչ խնդիր աստ 'ի բաց ,
Խնայեա 'ի սա , ըզսա եւեթ ինձ պարգեւեա պաղատիմ․․․

ՊՈԼԻԴՈՐ

Խորշեաց զի դեռ յոգունք են քեզ 'ի տէրութեան քում թշնամիք ,
Ոչ կարես տալ առանց ծանու վտանգի անձինդ ըզդա 'ի մահ․
Ահա քեզ գլուխ իմ թէ սըտեմ․ պատրաստէիր սուղ ինչ յառաջ
Մեծաւ պանծանօք զորդւոյ դորին խընդրել ըզվրէժ՝
Մեռեալ զորդի իւր յուսալով, զկենդանւո՞յն կամիս արդ մահ ։

ՊՈԼԻՓՈՆ

Կարէի զդա արդար մահու պատժել՝ ո՛ ոք եւ իցէ․
Այլ 'ի սուտ եւըս քան զեւս համել կամիմ ըզքեզ , տիկին ,
Ակն յանդիման Մեսենիոյ․ չէ եւ չէ դա որդի քոյին ,
Ըզքոյդ տեսեր դու կորուսեալ 'ի մէջ բոցոյ , եւ զայն յաճախ
Ի քումդ իսկ բերանոյ լըւան Մեսէնք առհասարակ․
Ամենայն ոք աստ ընդ իս համարի խօլ եւ ծաղրելի
Ընդդէմ ծանուցն իրացըս ցոյց ըզքան ծերոյ եւեթ ուրուք
Օտարի եւ քաջ 'ի քէն կաշառակուր եղելոյ․
Սակայն այլոց հաւատեաց մնալով առ այն , որդի քո զդա
Առ ժամս համարիմ․ հա՛պա լուծցի 'ի կապանաց ,
Ողջամբ ըզդա 'ի ձեռըս քո աւանդեմ, ակն ունելով
Համոզել ըզքեզ այսուհետ յառաջարկեալն իմ հարսանիս ։

ԵԳԻՍԹ

Զայրոյթ 'ի սիրտ իմ բորբոքի․ ըզհօրն իմոյ , զոր ըսպաներ ,
Կամի՞ս պըղծել եւ զառագաստ․ փութա ճեպեա տուր զիս 'ի մահ ,
Նըւազագոյն յոյժ այսուհետ հասուցանես դու ինձ չարիս․․․

ՄԵՐՈՊԷ

Մի՛ որդեակ իմ, մի՛ զդա եւեւըս զայրագներ , ո՞ գիտէ
Զինչ անողորմ երկնէ խորհուրդ դա 'ի մըտի ։ Ցիս Պոլիփոն․․․

ՊՈԼԻՓՈՆ

Ադրաստ , 'ի բաց եւ 'ի գաւթէ աստի յոգումբք 'ի քոյոց ,
Համապազորդք եւեթ կացցեն աստ պահապանք․ ելցէ 'ի բաց
Եւ ժողովուրդըդ դարձ առնել ապա այսրէն․ լըսէ՞ք ինձ․․․



# ՏԵՍԻԼ Դ․

ՊՈԼԻՓՈՆ , ՄԵՐՈՊԷ , ՊՈԼԻԴՈՐ , ԵԳԻՍԹ , ՊԱՀԱՊԱՆՔ․

ՄԵՐՈՊԷ

Զի՞նչ պատուիրէ դա Նոցա , ո՛վ դիք ոսկերք իմ սասանին ։

ՊՈԼԻՓՈՆ

Ոչ ոք կարէ փըրկել ըզդա , բայց աջ քոյին՝ թէ կամիցիս
Տալ ինձ զայն․ թէ ապըստամբք ինձ 'ի Մեսէնս իցեն , տիկին ,
Այլ յաղթունիս աստ չիք ոք , տիրեմ ես աստ միահեծան․
Թող ճշմարիտ իցէ զորդւոյ քումդ հիւսեալդ առասպել,
Այլ 'ի մատնել խմուս ըզդա 'ի մահ , եւ ոչ մի 'ի տուժից
Ինձ հասելոց կարասցէ զդա դարձուցանել քեզ վերկենդաղ․
Սուղ ինչ պարապ տամ 'ի խորհել․ մինչեւ արփւոյն խոնարհեալ,
Կա՛մ ընտանեաց դիցս առընթեր տացես ինձ աստ աջ հարսանեաց ,
Եւ կամ ինձէն յանդիման աչացդ ըզդա սպանից ես աստ․․․

ՄԵՐՈՊԷ

Ցիս տէր , լուր ինձ․․․

ՊՈԼԻՓՈՆ

Ընտրեա ըզմին , մեկնիմ գընամ ես 'ի բաց․
Իսկ դուք որպէս եւ կարէք՝ կարկատեցէք մնալ բաղայս ,
Այլ ընդ ձեռամբ իմով կայք աստ ամենեքին․ պահապանք ,
Որ ելանել ոք իշխեսցէ աստի , անկցի սրախողխող ։

# ՏԵՍԻԼ Ե․

ՄԵՐՈՊԷ , ԵԳԻՍԹ , ՊԱՀԱՊԱՆՔ 'ի խորս թեատրոնին․

ՄԵՐՈՊԷ

Սիրեցեալդ իմ եւ միակ որդեակ , հազիւ հաւատամ․․․
Ըսպանանել կամէի զքեզ , ինձէն ըզքեզ ըսպանանել․
Այլ 'ի ներքս 'ի սըրտի զգայի սոսկումն անպատմելի․․․
Բայց որպիսի՛ խիստ պայմանք դարձուցանեն զորդեակն իմ ինձ․․․

Զի՞ իսկ առեմ խիստ, սիրելի է ինձ պայման ամենայն,
Եթէ միայն վերըստին զորդեակն իմ ինձ մատուցանէ։

ԵԳԻՍԹ

Եղո՜ւկ ինձ, քանիօ՜ն էր լաւագոյն ինձ կորընչել
Ի տղայ տիոց. ո՜ւր այժմիկ, մայր իմ, ո՜ւր այժմիկ ձըգեմ ըզքեզ։

ՊՈԼԻԴՈՐ

Լուր ինձ արդ դըշխոյ տիկին, որ ինչ խընդրէ հարկ անհրաժեշտ.
Ըզհարուածըն մահացու 'ի կախ ունելթ ունի արդ
Բըռնաւորին յոյս անօրէն ժամ առնըլոյ, եւ մի ըզհեռ.
Ընդդէմ անձին յաճախելոյ. եթէ նա զաջ քո կարասցէ
Ընդունել, կայցի զպայմանըն դըժկամակս առ ժամս ընդ քեզ.
Իսկ թէ մերժես, դարձցի յարիւն՝ գըտեալ պատեհ առ ձեռին.
Առաւել քան զոր ցարդ արժան է քեզ առնել հանդէս
Մայրութեան քո. հասանէ քեզ առնել զանձին զոհ դըժպըհի,
Այլ վասն որդւոյ քո առնես զայդ։

ՄԵՐՈՊԷ

Մի՛ երկմըտիր, աւասիկ կամ։
Զամենայն ինչ յանձն առնում վասըն նորա։

ԵԳԻՍԹ

Ո՛հ մայր իմ։

ՊՈԼԻԴՈՐ

Այլ'ի զոհէ այտի գայցեն ակընկալիք յոգունք 'ի լոյս.
Թող բըռնաւորըն կեղծեսցէ, այլ ես յուսամ զի կանխեսցուք
Մեք քան ըզնա. բարեկամք մեր 'ի սկըզբանէ հաւատարիմք
Ընդ գիտելըն ըզճեռ յետին ապրեալ զեւրեանցըն Կրեսփոնի,
Գուն գործեսցեն զերծուցանել ըզնա 'ի ժանտ բըռնաւորէն.
Իսկ զի՞նչ 'ի տեսանելըն ապա ըզնա ոչ արասցեն.
Ոչ պակասէ ինչ նոցա, բայց զօրագլուխ։

ԵԳԻՍԹ

Աւասիկ ես։

ՊՈԼԻԴՈՐ

Այո՛ որդեակ իմ, զի խըլեմ դեռ որդեկոչ լինել քեզ,
Դու զօրագլուխ լիցիս նոցա. եւ ըզգամ ազգուհի աւետաւոր
Ի սըրտի՝ յորմէ հեռէ հաճեցան դիք փըրկել ըզքեզ
Ի նախկին վայրենացեալ յարձակմանէ բըռնաւորին.
Սակայն կեղծիս հարկ է առ ժամս 'ի վար առնուլ մեզ տիկին,



Պարտ է քեզ յօժարութիւն կեղծել յանարգըն պայման.
Իսկ քեզ քաջիդ պատճառել կերպ ցածուն 'ի ճահ առ 'ի բառնալ
Կամ գէթ նուազել զանօրէն բըռնաւորին ըզկասկածանս.
Կանգնեսցուք զինուք իւրովք ընդդէմ նորին յաղթանակ.
Պարտ է առնել զայս քեզ այսպէս, եթէ իցէ 'ի քեզ փոյթ
Խըզելոյ ըզվասըն քո կապանըս մօր տառապելոյ։

ԵԳԻՍԹ

Ո՛հ, երդնում 'ի հնազանդել, այլ ցորչափ եմս եւեթ անզէն.
Վա՜յ նըմին, եթէ ցասման խմում առ ձեռըն կայցէ զէն,
Ոչ եւս յայնժամ լըւայց ումեք, վառէ սպանեալըն իմ հայր զիմ աջ։

ՊՈԼԻԴՈՐ

Կաց, լուռ լեր. ներեա տիկին ինձ յերեսաց քոց փութալ
Առ բըռնաւորն՝ որում ընդդէմ հնարից բազմաց են մեզ պէտք.
Գիտացիր լաւ քան ըզքեզ կեղծիս 'ի վար արկանել.
Վըստահ լեր յիս, թող ինձ տիկին խոստանալ զաջ քո նըմա.
Ընկալայց 'ի նմանէ՝ սուղ ինչ պարապ թէ կարացից.
Իսկ թէ այսօր իսկ զանօրէն պահանջեսցէ հարսանիս,
Իրաց մեծամեծաց յուսամ ընդ հուպ 'ի Մեսենայ։
Դու զքաջութեան քո զսաստ թաքո առ ժամս, եւ դու ըզհեռ սաս–
Բովանդակ ըզգամ յանձին ընդ քեզ ըզգութ մայրենի, [տիկ-
Այլ են եւ մտք ինձ հայրենի եւ փորձ երկար, հաւատա ինձ։

ԵԳԻՍԹ

Ո՛հ հայր իմ.

ՄԵՐՈՊԷ

Երթ ապա ո՜ն, հաւատարիմդ իմ, եւ արա
Որպէս գիտես. կացից վայրիկ մի ատանօր ես ընդ որդւոյս։

## ՏԵՍԻԼ Զ.

### ՄԵՐՈՊԷ, ԵԳԻՍԹ

ՄԵՐՈՊԷ

Գէթ համբուրել ըզքեզ ցըյագ, եւ զիրկս ըզքեւ արկանել..

ԵԳԻՍԹ

Այլ քանի՜ ծանունց զընոց լիցի ատանալ քեզ, մայր իմ, զայդ։

ЧИТАЛИЩЕ „КРАСИРАЦ“

# ՀԱՆԴԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## ՏԵՍԻԼ Ա.

ՊՈԼԻՓՈՆ, ԶՕՐԱԿԱՆՔ.

ՊՈԼԻՓՈՆ

Արդ ուրեմըն Մերոպէ խոստանալ զաջ իւր հաւանի.
Երթ օ՛ն Ադրաստ, ամենեցուն ըզհարսանիս իմ ծանո.
Եւ արքունեացս արձակավայր որքան կարէ ընդունել,
Տուր մուտ ազատ լաւորերոյ մեսենացւոց, փութա երթ.
Ազդ արտաքիր եւ Մերոպեայ զի կամ մընամ աւասիկ
Կազմ եւ պատրաստ աստանօր կատարելոյ ըզկամըս իւր:

## ՏԵՍԻԼ Բ.

ՊՈԼԻՓՈՆ

Բախտըն որ ցարդ հաշտ էր ընդ իս, ըսկըսանի արդ ուրեմն
Ակնարկել յիս խեթիւ. սակայն իցէ՞ իսկ ճըշմարիտ
Զի կրեսփոնն այն խուսափեալ յիմոց երկար եւ հեռազօտ
Խուզարկութեանց՝ արդ եկանէ գայ յեղակարծ ինձ ընդառաջ.
Եւ 'ի ձըգել իմում ըզնա յարժանին մահ, պատահարաց
Կընճռեան անլոյծ եւ անըզգուշ իսկ գըթութիւն իմ կեղծ 'ի կեղծ
Մատնեն ըզնա միահաղոյն դատապարտեն եւ փըրկեն:
Այլ զոր սկըսայն մարթանոք՝ նովին ածից զայն եւ յամբոկ,
Մինչեւ բըռնի դառնալ անդրէն ըստիպեսցի ժամանակ:
Թէ քըրթմընջեն զինէն Մեսէնք, եւըս քան զեւս աներկեւան
Եւ համարձակ պարտ է ինձ զանձն իմ առ նոսա ցուցանել.
Խոնարհի արդ Մերոպէ 'ի հարսանիս՝ յորմէ խորշէր
Այնու եւեթ զի է մայր, եւ կործանման իմում արդեօք
Յուսայ ըզհետ. այլ ինձ լիցի ունել զառաջըս չարեաց.
Են են եւ ինձ ոչինչ ընդհատ հարսանիքս այս դըժպըհի,



Այլ անդէն իսկ յառագաստն հարսանեկան յապահովլ
Կանխեցից քան ըզնա յօգուտ անձին արկանել զայն.
Մեղանակից եւ ընակակից նըմին՝ առից ըեւր պատեհ
Կատարելոյ զոր ոչ կարեմս 'ի կատարումն ածել այժմէն.
Ոչ եւս է հնար այսուհետեւ ըզկայ առնուլ ինձ անվըտանգ:

## ՏԵՍԻԼ Գ.

ՄԵՐՈՊԷ, ԵԳԻՍԹ, ՊՈԼԻԴՈՐ, ՊՈԼԻՓՈՆ, ԶԻՆՈՒՈՐՔ, ԺՈՂՈՎՈՒՐԴՔ; ՔՈՒՐՄՔ.

(Բագին ՚ի վեր.)

ՊՈԼԻՓՈՆ

Եկ մատիր դըշխոյ տիկին, ես նախ ըզքեզ անուանեցից
Նախընծայ անուամբըդ քով. ապա ուրեմըն զիջանիս.
Ո՛ տայր թէ օրս այս մեզ ծագէր բարենըշան, հանդէս տօնի
Ըստ ներել անձկութեան ժամուս յինէն պատրաստեալ,
Զաշխարհական գործոյս ըզշուք յաճախեացէ եւ ըզփառս.
Աւագանին եւ ռամիկ, քուրմք իսկ եւ դիք կացցեն վըկայք
Շիջանելոյ 'ի միջի մերում 'ի սպառ ատելութեան,
Եւ 'ի նախկին իւր 'ի պատիւ կալցի անդրէն իւրաքանչիւր,
Եւ վըսեմ փոխարինին ընաւից ցայսվայր թըշնամանաց:

ՄԵՐՈՊԷ

Այլ գիտիցե՞ն 'ի քէն որ շուրջ կան աստ զի մայր եմ տակաւին,
Եւ զի որոց գընոց զորդւոյ իմոյ ըզկեանս ինձ վաճառես:

ՊՈԼԻՓՈՆ

Այլազգ յանուն քո խօսեցաւ դա, փոխեցա՞ր 'ի խորհըրդոց.
Իսկ թէ կամիս խորհրդակից նոցին ըզմեծըս զայս ակումբ,
Կամիմ եւ ես իմոցս ըզսա, եւ ոչ խիթամ տալ զայնց համար:
Լուիցեն Մեսէնք արդ համօրէն. եկի ես այսըր յաղթական,
Սուսերբ իմով եկի յայս գահ՝ յոր զիս եւ հաւք իմ կոչէին.
Գիտացի բառնալ ինձ ռահ, նըկուն եղեւ թագաւոր ձեր:
Իմ քան զարժանըն զայրագնեալ թերեւս յանժամ, թողի բառնալ
Զանպարտական որդւոցն ըզկեանս. արգասիք չարք, այլ արգասիք
Ոչ անսովորք յաղթութեան. կալայ ըզթագ, եւ ունիմ զայն.

Ո՛րպիսի կացի ես ձեզ այնուհետեւ զօրավար
Դատաւոր արքայ եւ հայր ամենեցուն, գիտէք դուք զայն.
Մերոպէ ինքնին եկաց աստ յարքունիս իմ անդրստին
Ամենեւին յապահովի, որ եթէ ոչ յազատութեան,
Այլ մեծարեալ հանապազ թագաւորէր որպէս դշխոյ.
Եւ սակայն չէր յինէն զանխուլ՝ զի զմի յորդւոց իւրոց տածէր
Ինձ 'ի սատան, առ 'ի խնդրել յինէն վրէժ անօրէն.
Արդ առաջի ձեր ահա կայ զոր ինքն որդի իւր անուանէ.
Ահաւադիկ, տեսէք ընդ յո՛ր դէմս գայ ձեզ աստ 'ի յայտ:

ՄԵՐՈՊԷ

Ահաւադիկ, տեսէք ցոր վայր ածեալ զաւակն է Ալկիդեայ.
Վա՜յ մատնըչին որ զդա եած հասոյց յայս վայր աղետից:

ՊՈԼԻԴՈՐ

Համբեր որդեակ, սանձահարեա զզայրոյթ քոյին:

ՊՈԼԻՓՈՆ

Ես եմ այո՝
Որ ընդ այսր ածեմ 'ի դէմս նենգաւոր յեղուզակի,
Որ զամպարիշտ աջ իւր տայի յարիւն անպարտ շաղախել.
Տեսէք զախոյեանդ անպարտելի դիւցազըն նոր.
Դա արժանի սուտ գիւ զաւակ Ալկիդեայ գայր զաղտագողի
Դաւել զիս, կըրթեալ զանփորձ աջ իւր կանխաւ 'ի հարուած
Այլոյ ուրուք վատօրէն բազմութեամբ, եւ կայր ծըպտեալ
Ցարխականըն դարանի մնալով ժամուն առ 'ի կարել
Լինել 'ի սիրտ իմ ձեռընհաս. որպիսի եկըն՝ նոյնպիսի
Ընդ 'ի յայտ ածեն ահա կամ դաւ կամ դէպք կամ սըտութիւն.
Կարող էի ինձէն դըմա տալ զարժանին պատուհաս,
Եւ կարեմ իսկ. սակայն ինձ յոյժ է ընձալի խաղաղութիւն.
Եւ զի խընդրէ արդ Մերոպէ խնայել 'ի կեանըս դորա,
Շնորհեմ զայն՝ եթէ միայն զաջ իւր ինձ մի՛ ժըխտեսցէ.
Եւ աստ ուրեմն 'ի միջի մերում չիջցի հեռ ամենայն.
Եւ ոչ ցայս վայր ընկայ առեալ, թէ իւր իցէ դա որդի՝
Արքայութեան իմոյ կամիմ ընդ դա ժառանգ կացուցանել,
Քանզի եւ չիք իսկ իմ որդի. եւ զի՞նչ այլ եւըս կարիցեմ.
Է՞ր իսկ ինձ պարտ առնել այսչափ. իսկ դուք սովորք ցարդ ով Մե-
կալ ընդ ձեռամբ քաջամարտիկ ալեւորի, կամիցիք [սէնք
Պատանի անտեղեկան՝ տէր 'ի վերայ ձեր անմըշան,
Իւր իսկ ինքեան անծանօթ, որոյ չիք ինչ տըւեալ զանձնէ
Բայց փորձ տըխուր, որ աշխարհի հնարից անդէտ է 'ի սպառ...



ԵԳԻՍԹ

Անդէտ հնարից! քոյոց եւեթ իցեմ անդէտ, այլ ոչ ըննաւ
Հնարից Ալկիդեայ. զորոց ընդփորձ գիտացից տալ...

ՊՈԼԻԴՈՐ

Մի՛, լուռ լեր. առ ի՞նչ գըրգռել եւ եւս ընդ 'ի զայրոյթ.
Տեսանես քանի՛ յոգունք կան ընդդիմաւ թիկնապահք.
Տես զի զահի հարեալ եւ լուռ եւեթ կան աստ ամենեքեան:

ՊՈԼԻՓՈՆ

Լըռութիւն ձեր, մեսենացիք, խոր հիացումն ինձ յայտ առնէ
Ընդ կարի յոյժ հեզութիւն իմ. քաջ տեսանեմ եղեալ ընձեզ
Բանիւք իմովք խեղամուտ, նա աւանիկ եւ անխորհուրդ
Թըւեսցի ձեզ հաւատալ զանձն իմ արդ դոցա բոլորովին,
Ուր սիրտ դոցա չէ ինչ զանխուլ յինէն, այո՝ ոչ ժըխտեմ.
Այլ ամենայն վըստանգաւ ընդյաղթութեան իմոյ կամիմ
Անջինջ յուշոյ ընդփոխարէն. 'ի քեզ եւեթ արդ, Մերոպէ,
Են աչք իմ. ընկալայ զհաւանութիւն քոյին վաղ,
Կամիցիս թերեւս 'ի յետս առնուլ այժմիկ զայն յինէն:

ՄԵՐՈՊԷ

Լըռութիւնդ, այդ եւ սոսկումն աշխարհական հրապարակիս
Կարի իսկ քաջ յայտ առնէ զանձին իմոյ ճակատագիր.
Կեցցէ ապա որդի իմ ծ՛ն մահուամբ իմով. պարտք են ինձ այս:
Ո՜ Կրեսփոնի ըստուեր տըխուր ցարդ անվըրէժ, ներեա ինձ
Զայս ակամայ թըշնամանս, քեւ եղէ մայր, եւ ահա զամ
Վասըն կենաց որդւոյ քոյին 'ի մահառիթ հարսանիս.
Ի քայլափոխս յայս դըժընդակ դու ինքն որդեակ իմ ձըգես զիս.
Այլ թէ կեցցես դու, գըտայց գոհ. բայց իցէ՞ ստոյգ զի ըռնաբար...
Ո՛վ դուք երբեմըն հօր դորա հաւատարիմ հըպատակք,
Որ տեսանէքդ ընմեզ յաղէտս յայս արդ հասեալ...

ՊՈԼԻՓՈՆ

Հա՛պա փութա...

ՄԵՐՈՊԷ

Ցի՛ս, մի՛ ցասնուր. սուղ ինչ այլ եւս, եւ զըաւ առնեմ բանից իմոց:
Լուր արդ, որդեակ, յետին իմոցըս խորհըրդոց. զուր խիզախես,
Խոնարհեցո աստ ուրեմն յաղթականին ընդդէմ քոյին.
Ծառայութիւն քեզ յանձն առնուլ, եւ ոչ այլ ինչ խըրատել կարեմ.

Ըղձաճոյս նորա կանխել եւ լուռ ուխտ կատարել,
Ի բաց դնել ըզխորխտումն որչափ 'ի քումդ է 'ի կարի,
Եւ մի զանուն հօր քո երբէք յիշատակել. Թերեւս այսուիկ
Լիցի քեզ ընկըրկել զսիրտ նորա յարենէ.
Տեսցես ընդ հուպ փակեալ զմայր քո 'ի շիրիմ յաւերժական.
Կալ ըզյետին զայսոսիկ ըզխնամս պատուէրս իւր 'ի մըտի :

ԵԳԻՍԹ

Տառապեալ մայր... դըժպատեհ կարեկցութիւն... եւ կամիցիմ
Կեալ այդպիսի անկեաց կենցաղ, կեալ փըրկանօք այդպիսեօք.
Ի՜հ, չէն ինձ կեանք ծառայել, Թող մայր իմ ինձ, Թող մեռանել:
Մեռայց գոնեա արժանի դիւցազին հօր, եւ դու կեցցես :

ՊՈԼԻՓՈՆ

Այդ քան զարժանըն յամեցումն արդ աւասիկ, Մերոպէ,
Ազդէ յիս սըրտմըտութիւն. դարձուցանեմ զորդիդ 'ի քեզ,
Դարձուցանեմ զարքայութիւն եւ սպառսպուռ խաղաղութիւն,
Զի՞ արտասուես, Թերեւս յուսաս ապըստամբել խնդս յինէն,
Այլ ես վըստահ եմ 'ի նոսին, եւ տեսանեն ամենեքեան
Զի առաւել ինչ չէր ինձ մարԹ առնել ընդ քեզ Թէ կամէի.
Հա՛պա 'ի կախ կացցէ տապարըն սուրբ զուլամբ զըւարակին.
Աւասիկ աջ իմ, Մերոպէ, մընամ քոյումդ առ 'ի հրաման
Տալ 'ի զենումըն զօհիդ :

ՄԵՐՈՊԷ

Նշո՛ւկ զինեւ, զի՞նչ արարից.
Որ դառնաշէտ... պահ սոսկալի. հարկ ինձ ուրեմն է զաջ իմ...
Այլ ո՛վ տեսիլ, ահա Կրեսփոն արիւնըռուշտ եւ սպառնալից
Անցեալ 'ի մէջ. ո՛հ յո՞ փախեայց, ո՛հ ու՞ր իցեմ, յիս ո՛վ Մեռէնք :

ԵԳԻՍԹ

Ոչ եւս ունիմ ժոյժ, կատաղիմ...

ՊՈԼԻԴՈՐ

Մի՛ դու, կարկեաց. ո՞չ տեսանես
Ըզգոռոզին ծանրացասումն 'ի քեզ խոժոռ հայեցուած :

ՊՈԼԻՓՈՆ

Մի՛ւս եւս անգամ աջ կարկառեմ, տիկին, ոչ եւս...

ՄԵՐՈՊԷ

Ո՛վ դիք, աջ իմ...



ԵԳԻՍԹ

(Յափշտակեալ զտապար 'ի ձեռանէ քրմին, յարձակի 'ի Պոլիփոն, եւ 'ի մի հարուածոյ զգետնէ զնա՝ առնելով).
Մեռիր սատակեաց, այս քեզ ահա մատուցեալ աջ:

ՊՈԼԻԴՈՐ

Ո՛վ ժըպիրհ յանդըգնութիւն :

ՄԵՐՈՊԷ

Զի՞նչ տեսանեմ:

ԵԳԻՍԹ

(Կրկնէ զհարուածն՝ առնելով). Սատակեաց :

ՊՈԼԻՓՈՆ

Հասէք զօրականք. ո՛վ դաւաճան. մեռանիմ ես :

ԶՕՐԱԿԱՆՔ

Դաւ է, մեռցի :

ԺՈՂՈՎՈՒՐԴՔ

(Ընդդէմ զօրականէն.) Ո՛հ մի մեռցի, կեցցէ Կրեսփոն Թագաւոր մեր:

ՄԵՐՈՊԷ

Որդի իմ է, երդնում 'ի գլխ. դա ինքն է ձեր Թագաւոր :

ԵԳԻՍԹ

(Յարձակեալ 'ի մէջ երկոցունց կողմանց ընդդիմամարտից).
Տաց ես ձեզ միւս այլ ապացոյց. այժմիկ տապար իմ ուխտ այս
Ի չէք դարձուսցէ զամենայն զէն տէգ եւ սուսեր :

ՄԵՐՈՊԷ

Հասէք Մեսենացիք կալ արքայի ձերում պաշտպան :

ՊՈԼԻԴՈՐ

Ոգի առնում... ահա բեկան արդ Թիկնապահք բըռնաւորին :

ՄԵՐՈՊԷ

Օ՛ն արդ որդեակ իմ դարձիր, ուա՜ղ հեքիս տառապելոյ :

ՊՈԼԻԴՈՐ

Ի նախճիրս արեան ըղձեա նորա գնացից, ո՞ տայր ինձ

Զառոյգ տիոցս իմոց բազուկ, այլ 'ի վերայ նորա մեռայց :
Հա՛պա լուր ինձ, դարձիր որդեակ, մի՛ խիզախեր դիմագրաւ.
Թող մեռանել ինձ փոխանակ քո, ես միայն թող մեռայց :

ԵԳԻՍԹ

Այլ արդ ահա յաղթեցաք, ուրախ լեր մայր իմ, աւասիկ
Խուժն 'ի բաց զօրքն անօրէնք. անկաւ Ադրաստ 'ի սրոյ իմմէ,
Եւ յաճախէ եւըս քան զեւս առ մեզ ամբոխ քաղաքացեաց :

ՄԵՐՈՊԷ

Մեսենացիք, Կրեսփոն է դա, որդի իմ է, ո՞չ ճանաչէք
Ի դիմացն 'ի ձայնէն 'ի հայեցիցն ըզնա իւրոց,
Ցանօրինակ քաջութենէն եւ յանսահման սիրոյ իմմէ . . .

ՊՈԼԻԴՈՐ

Եւ յերդմնակուռ բանից իմոց. առ ձեզ, Մեսէնք, պաղատիմ.
Ի շնորհս ալեացս այսոցիկ, վասն անըստգիւտ իմոց գնացից՝
Զոր ճանաչէք, առ սէր մեծի հօրըն ձերոյ քան արքայի,
Առ սէր Կրեսփոնի, հաւատս իմում ընծայեցէք
Վըկայութեան. ես կեցուցի ըզդա, ես ինքըն սընուցի . . .

ԵԳԻՍԹ

Զոր տեսանէքդ աստանօր, մեսենացիք, տապաստ անկեալ
Ըզպոլիփոն, ես ըսպանի ըզդա 'ի վրէժ հայրենի,
Ի վրէժ եղբարց իմոց եւ մօր, խընդրեալ եւ զիմ լինել ըզվրէժ.
Եթէ դատիք զիս պարտաւոր այսուիկ, 'ի ձեզ եմ ապաստան.
Ընկենում ահա զտապարն, եւ կարացի առնել այսքան.
Կամ ապազէն անպատըսպար 'ի ձեռըս ձեր. եթէ հեղի
Զարիւն դորա տարապարտուց, հեղցի եւ իմըս փոխանակ :

ԺՈՂՈՎՈՒՐԴՔ

Ո՛վ քաջ արանց, ո՛վ սիրտ չըքնաղ, յար եւ նըման հօրըն զաւակ :

ՄԵՐՈՊԷ

Կրեսփոն 'ի դմա վերկենդանեալ :

ԺՈՂՈՎՈՒՐԴՔ

Ո՛վ յոյս զուարթ, ո՛վ արքայ մեր :



ՊՈԼԻԴՈՐ

Եւ արքայ արժանաւոր. ես նախ անկեալ առ ոտըս իւր՝
Մատուցից դըմա ըսպաս, ընդ իս եւ դուք առհասարակ :

ԺՈՂՈՎՈՒՐԴՔ

Ուխտ յաւերժական երդնումք նըմա ամենեքեան.
Հանդոյն քումըդ քաջութեան լիցիս անշուշտ դու եւ արդար,
Դէմք քո չկարեն պատրել ըզմեզ :

ԵԳԻՍԹ

Երդնում լինել այնպիսի.
Իսկ թէ չեղէց, անկայց եւ ես իբրեւ ըզդա սրախողխող :

ՊՈԼԻԴՈՐ

Եղո՛ւկ ինձ. ընդէ՞ր ոչ աստ իսկ արդ զրաւիմ 'ի կենաց.
Ձիք իսկ եւ չիք ինձ զուարթագոյն քան զայս ունել կենաց վախճան :

ՄԵՐՈՊԷ

Եկ այսր 'ի գիրկս իմ արդ որդեակ. այլ ո՞հ նուաղիմ առ յոյժ խընդի :

ԵԳԻՍԹ

Ո՜հ մայր. թըւի անըզգայեալ 'ի կարի յոյժ խընդութենէն.
Ի ներքս ուրեք երթիցուք ածել ըզնա 'ի հանգիստ.
Դարձայց փութով տալ լուըլ զինէն համար ձեզ ո՛վ Մեսէնք.
Եկ դու ըզհետ իմ արդ եկ հայր բարեգործ, եւ միշտ զիս քեզ
Կա՛լ յորդի առաւել քան թէ յիշխան 'ի թագաւոր :

---

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ--Арм. ССР
им А
Ա. ՄՅԱՍ ԱՆՎԱՆ

50 ч

2663